

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	2
Ի՞նչ է ՁԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ	4
ՁԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ԱՇԽԱՐՉՈՒՄ	5
Մրցույթի պատմությունը	5
Մրցույթը տարբեր երկրներում	7
Մրցույթի անցկացման կարգն ու կանոնները	11
ՁԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ԴԱՅԱՍՏԱՆՈՒՄ	23
Մրցույթի պատմությունը Դայաստանում	23
«2008 Ֆ. ԶԵՍԱՓԻ անվան միջազգային իրավունքի դատախաղ»	
մրցույթը Դայաստանում	26
Մրցույթի կազմակերպիչները	34
«Դայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա»	
հասարակական կազմակերպություն	35
Դայաստանի իրավաբանական իիմնադրամ	37
«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերություն	37
«2008 Ֆ. ԶԵՍԱՓԻ անվան միջազգային իրավունքի դատախաղ»	
մրցույթի հայաստանյան մրցափուլի աջակիցները	38
ԿՈՆՏԱԿՏՆԵՐ	41
ՎԵՐՋԱԲԱՆ	43

ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից ու սրընթաց զարգացող աշխարհում մրցունակ մասնագետ լինելու նախադրյալ է ոչ միայն խոր և համընդգրկուն գիտելիքների ու մասնագիտական ունակությունների առկայությունը, այլ դրանք ընթացող զարգացումներին ու փոփոխություններին հաճապատասխան զարգացնելը և ծիշտ կիրառելու ունակությունը: Գիտելիքների ծկուն կիրառումը պրակտիկայում կարող է հանդիսանալ մասնագիտական կայացման լավագույն երաշխիք: Վերոնշյալը, կարծում ենք, առավել կարևոր է իրավաբանների համար:

Այդ իսկ պատճառով Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասցիցիան իր գործունեության ուղղություններից մեկն է դարձրել նոր սերնդի այնպիսի իրավաբանների ուսուցումը, որոնք օժտված կլինեն մտքի ծկունությամբ և կկարողանան ծիշտ կիրառել իրենց գիտելիքները անցումային փուլուն գտնվող, դեռևս կատարելագործման կարիք ունեցող օրենսդրական դաշտ ունեցող և միջազգային ինտեգրման սկզբնական գործնթացում գտնվող պետության իրավակիրառ պրակտիկայում: Այդ նպատակի իրականացմանն ուղղված միջոցառումներից է նաև «Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախանակ» մրցույթի կազմակերպումը: Մրցույթն ունի շուրջ կեսդարյա պատմություն և համարվում է միջազգային իրավունքի ոլորտում ամենահեղինակավոր մրցույթն աշխարհում, իսկ Հայաստանում այն կազմակերպվում է արդեն ութերորդ անգամ:

Թեև մրցույթի նկատմամբ իրավաբան-ուսանողների շահագրգուվածությունն ու նրանց համար մրցույթի ունեցած արդյունավետությունն աստիճանաբար աճում է, բայց մրցույթի կազմակերպիչները չեն դադարում Հայաստանում դրա առավել զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղված գործունեությունը: Այդ է պատճառը, որ մրցույթի հայաստանյան փուլի կազմակերպիչներն ու ջեսափականները ջանքեր չեն

խնայում Հայաստանում մրցույթի շարունակականությունն ապահովելու, այն մասնակիցների համար հնարավորինս արդյունավետ դարձնելու համար:

Սույն գրքույկն ընթերցողին կարող է ամբողջական ինֆորմացիա տրամադրել Զեսափի մրցույթի մասին, որա ստեղծման, անցկացման ընթացակարգի, մրցույթի հայաստանյան պատմության ընթացքում թիմների ցուցաբերած արդյունքների, մրցույթի կազմակերպման գործում իրենց ներդրումն ունեցած անձանց և կազմակերպությունների մասին և ուղեցույց կլինի մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող իրավաբան-ուսանողների համար:

Միջազգային իրավունքին նվիրված Զեսափի անվան մրցույթն ամբողջ աշխարհում անց է կացվում դատախաղի տեսքով: Մրցույթին մասնակցում են 2-5 իրավաբան ուսանողներից բաղկացած թիմեր, որոնք, ստանալով կազմակերպիչների կողմից մրցույթի թեման և անհրաժեշտ փաստաթղթերը, հետազոտում և կազմում են հայցադիմումներ, որոնց շուրջ բանավոր մրցափուլում ծավալվում է թիմերի բանավեճը: Հայցադիմումները գրվում են հիպոթետիկ գործի շուրջ՝ միջազգային իրավունքի բնագավառից: Մրցույթին մասնակից բոլոր երկրների համապատասխան գրասենյակները ամեն տարի ստանում են մրցույթի գլխավոր կազմակերպիչ իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի կողմից մշակված երևակայական դատական գործը: Մասնակից երկրներում նախօրոք անցկացվում են ազգային կամ տարածաշրջանային մրցափուլեր, որոշելու համար այն բուհը, որը կներկայացնի տվյալ երկիրը միջազգային մրցափուլում: Ազգային ու տարածաշրջանային մրցափուլերն անց են կացվում ամեն տարվա դեկտեմբերից փետրվար ընկած ժամանակահատվածում: Մրցույթի և ազգային, և միջազգային մրցափուլերում թիմերը, ներկայացնելով այս կամ այն մտացածին երկիրը, հանդես են գալիս ժյուրիի առջև՝ միջազգային դատարանի օրինակով, որը գնահատում է թիմերին: Ազգային մրցափուլերում ընտրության հիմքում հաղթանակներն ու պարտությունները գրանցելն է, որոնք պայմանավորված են գրավոր և բանավոր փուլերում թիմի վաստակած միավորներով: Գրավոր մրցափուլում թիմի միավորը որոշվում է նրա ներկայացրած հայցադիմումի ստացած գնահատականով, և այն կազմում է թիմի ընդհանուր միավորի 1/3-ը: Մնացած միավորները թիմը ստանում է բանավոր մրցափուլերում: Բանավոր մրցափուլերում թիմերի ստացած միավորները գումարվում են գրավորի միավորներին և կազմում թիմի ընդհանուր միավորը:

Սիհազգային փուլը, որն ավանդաբար անց է կացվում Վաշինգտոնում, ընդգրկում է տարբեր մրցափուլեր: Նախնական մրցափուլերի ընթացքում յուրաքանչյուր թիմ մրցում է չորս անգամ, երկու անգամ՝ որպես հայցվոր և երկու անգամ՝ պատասխանող: Դրանց արդյունքում 16 լավագույն թիմերը տեղափոխվում են մրցույթի ընտրական մրցափուլեր: Դրանցում հաղթող ութ թիմերը մրցում են քառորդ եզրափակիչում, որից չորս թիմեր անցնում են կիսաեղբակակիչ: Ի վերջո, երկու թիմերը հանդիպում են

Եղրափակիչ՝ Զեսափի աշխարհի գավաթի խաղարկության փուլում:

Մրցույթին ունի մի քանի մրցանակներ, այդ թվում՝ լավագույն թիմ, լավագույն հայցադիմում, լավագույն բանախոս, որոնք տրվում են և ազգային, և միջազգային փուլերում, և մի շարք մրցանակներ, որոնք տրվում են միայն միջազգային մրցափուլերի արդյունքում:

Զեսափի մրցույթն այսօր կարևոր իրադարձություն է միջազգային իրավունքի ասպարեզում և Երիտասարդ իրավաբաններին թույլ է տալիս նաևնագիտական զարգացում ապրել, ծևավորել մրցակցության ու ընկերության ոգին, ինչպես նաև թույլ է տալիս Վերջիններիս հաղորդակից լինել այլ երկրների փորձին ու համակարգերին:

ՁԵԱՎՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մրցույթի պատմությունը

Զեսափի մրցույթն առաջին անգամ կայացել է Հարվարդի համալսարանում՝ 1960թ.-ի մայիսի 3-ին, երբ նի խումբ ուսանողներ տարբեր մրցութային միջոցառումների միջոցով նպատակադրվել էին զարգացնել կրթությունը միջազգային իրավունքի բնագավառում։ Զեսափի առաջին մրցաշրջանը կոչվում էր «Միջազգային իրավունքի դատախաղ» և կազմված էր բացառապես Հարվարդի ուսանողներից։ Բանավիճում էին երկու ամերիկացի ուսանողներ՝ Թոնաս Ֆարերը և Ուիլիամ Զաբելը և երկու օտարազգի իրավաբան ուսանողներ՝ Բերնարդ Քլարքը՝ Նոր Զելանդիայից և Այվեն Շեղը՝ Կանադայից։ Զեսափի առաջին թեման կոչվում էր «Կուրայի ագրարային ռեֆորմի նախն գործ»։ Որը գրվել էր այն ժամանակ Հարվարդի համալսարանի պրոֆեսորի օգնական, այնուհետև՝ Միջազգային արդարադատության դատարանի նախագահ Ստեֆան Շվերելի կողմից։

1961թ.-ին Կոլումբիայի համալսարանում կայացավ առաջին միջհամալսարանական մրցաշրջանը: Ազելի ուշ մրցույթը վերանվագեց ի պատիվ Սիօվագգային արդարադատության դատարանի դատավոր Ֆիլիպ Ջեսափի և հաջորդ երեք տարիների ընթացքում, ընդլայնվելով, ընդգրկեց տասնյակ ամերիկյան իրավաբանական դպրոցներ: 1962-ին Ջեսափի կազմակերպիչները հիմնեցին Սիօվագգային իրավունքի ուսանողական ընկերությունների

ասոցիացիան (Association of Student International Law Societies, ASILS), որը կազմված էր միջազգային իրավաբանական միություններից և համալսարանների ներկայացուցիչներից: Զեսափի մրցույթն արդեն համակարգվում էր ASILS-ի պատասխանատու ուսանողների կողմից: Յիմնադիր փաստաթղթերի համաձայն՝ այս կառուցիչ անդամ ուսանողները համոզված էին, որ միջազգային իրավունքի սկզբունքները պետք է բազմակողմանի ուսումնասիրված և յուրացված լինեն, և նրանք աշխատում էին կրթել իրենց և իրենց ընկերներին՝ միջազգային իրավունքի, միջազգային կազմակերպությունների ու ինստիտուտների սկզբունքների, իրավական համակարգերի համեմատության վերաբերյալ: ASILS-ը և Զեսափի մրցույթը հովանավորվում էին Միջազգային իրավունքի ամերիկյան ընկերության (American Society of International Law, ASIL) կողմից, և տարիներ շարունակ Զեսափի կառավարիչը գտնվում էր ASIL-ի գործադիր գրասենյակում՝ Վաշինգտոնում: 1970թ.-ին Յենի Լյուս հիմնադրամը դրամաշնորհ տրամադրեց ASIL-ին՝ որպես մրցույթի կազմակերպման միջոց: Տասնյոթ տարի Զեսափի կառավարիչը հանդիսանում էր ASIL-ի աշխատակիցը, զբաղվում էր բացառապես մրցույթի կազմակերպմանը և կոչվում էր Զեսափի ընկեր: 1987-ին ASILS-ը վերակառուցվեց իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի (International Law Students Association, ILSA), երբ մրցույթի շրջանակները բավականին լայն էին: Զեսափի մրցույթի գոյությանը մեծապես նպաստեցին Զեսափի Ընկերները (Friends of the Jessup, FOJ), որի կամավորները անսահման ջանքեր և ժամանակ են ներդնում մրցույթի կազմակերպմանը: 1994թ.-ին կազմակերպությունը պաշտոնապես հաստատվեց որպես ոչ առևտրային, բարեգործական կազմակերպություն՝ ինքնուրույն իրավաբանական մարմին: 2003-ին ILSA-ի գրասենյակը Վաշինգտոնից տեղափոխվեց Չիկագո:

ILSA-ի առաքելությունն է միջազգային իրավունքի ուսումնասիրնան ու յուրացնանը նպաստելը: Այս նպատակ ունի խրախուսել իրավաբան ուսանողների ու շահագոգիռ անձանց համագործակցությունը, մեծացնել տարրեր երկրների մշակույթների ու իրավական համակարգերի ուսումնասիրնան հնարավորությունները և այլն: Այս երկակի առաքելության՝ կրթություն և համագործակցություն, հաջողությունը կենսական է աշխարհի խաղաղության ու շուկայական տնտեսության ապագայում: ILSA-ն իր տարրեր ծրագրերի միջոցով աշխատում է այս նպատակների ուղղությամբ, և Զեսափի մրցույթը, իհարկե, նրա ամենամեծ ծրագրերից

է: Տարեցտարի մրցույթը ավելի ու ավելի շատ ուսանողների է գրավում աշխարհի շատ երկրներից: Տարբեր պետությունների կառավարությունների կողմից ավելի ու ավելի մեծ պահանջարկ են ստանում մրցույթին ներկայացված աշխատանքները: Ամեն մի նոր մասնակցի հետ մրցույթը կայանում է և ավելի արդյունավետ պայմաններ ստեղծում միջազգային իրավունքի ոլորտում կրթության և, ինչու չէ, այդ ինստիտուտի կայացման գործում:

Մրցույթը տարրեր երկրներում

Զեսափի մրցույթը միջազգային իրավունքի ոլորտում անցկացվող ամենահայտնի, սակայն ոչ միակ մրցույթն է: Նմանատիպ մրցույթներ անցակցվում են նաև այլ միջազգային կազմակերպությունների կողմից: Օրինակ, իրավաբան ուսանողների Եվրոպական ասոցիացիան (The European Law Student's Association) ևս վերջին հինգ տարիների ընթացքում կազմակերպում է նման բնույթի դատախաղ մրցույթ: Ասոցիացիան ունի 30 000 անդամ և տեղակայված է 35 երկրների համալսարաններում: Մրցույթի նպատակն է իրավաբան-ուսանողների գիտելիքները համալրել փորձով և նպաստել նրանց շրջանակներում գլոբալիզացիային առնչվող հարցերի շուրջ քննարկումների անցկացմանը: Մրցույթն անցակցվում է բանավոր ընթացակարգով, որին կարող են նաև նպակցել աշխարհի բոլոր երկրների իրավաբան-ուսանողները: Այս մրցույթին ևս ուսանողները կարող են նաև նպակցել թիմերով: Մրցույթի ընթացքում կողմերի վեճի առարկա հանդիսացող հարցերը ներկայացնելիս թիմերը ներկայացնում են մի դեպքում հայցվոր, մյուս դեպքում՝ պատասխանող կողմին, իսկ մրցույթի դատավորներն ընտրվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության իրավաբան-փորձագետներից:

Այսուամենայնիվ, Զեսափի մրցույթը միջազգային իրավունքին վերաբերող ամենաընդգրկուն մրցույթն է: Զեսափի մրցույթի նաև նակիցների կարելի է հանդիպել այսօր աշխարհի բոլոր ծայրերում՝ Յնդկաստանից մինչև Ավստրալիա, Չինաստանից մինչև Կոնգո: Մրցույթի պատմությունն արդեն գրանցել է աշխարհի մոտ 120 երկրների մասնակցություն: Նախկին Զեսափի մասնակցներն ու դատավորները այժմ կազմում են տարրեր նախարարությունների, պետական ու միջազգային կազմակերպությունների աշխատակիցների գերակշիռ մասը: Զեսափականների կարելի է հանդիպել աշխարհի լավագույն իրավաբանական ընկերություն-

ներում ու կորպորացիաներում, կրթական համակարգում և խորհրդարաններում: Եվ տարեցտարի մրցույթն ընդլայնում է իր շրջանակները: Կարծում ենք՝ ընթերցողին հետաքրքիր կլինի ծանոթանալ աշխարհի մի քանի երկրներում մրցույթի կազմակերպիչների ու համախոհների հետ:

Աշխարհում Ձեսափի կազմակերպիչները հիմնականում համալսարաններն ու իրավաբանական դպրոցներն են կամ մեծ իրավաբանական ընկերությունները, որոնք քո կազմակերպում են «Ֆիլիպ Ձեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը:

Օրինակ Կանադան ունի մրցույթին մասնակցելու շուրջ երեսունհինգ տարվա պատմություն: 1960-ից մինչև 1972թ.-ը երկիրը ինքնուրույն չի մասնակցել մրցույթին, բայց կանադացի ուսանողները ամերիկյան թիմերի կազմում եղել են մրցույթի մասնակիցներ: Սկսած 1973թ.-ից՝ Կանադան սկսեց անցկացնել ազգային ընտրական մրցույթ՝ որոշելու համար այն իրավաբանական դպրոցները, որոնք կներկայացնեին երկիրը միջազգային մրցույթում:

Ուկրաինայում Ձեսափի մրցույթը կազմակերպվում է 1996թ.-ից: Արդեն 5 տարի է, որ «Մագիստրոս և ընկերներ» իրավաբանական ընկերությունը հանդիսանում է Ուկրաինայում Ձեսափի մրցույթի հիմնական կազմակերպիչն ու հովանավորը: Ընկերությունը 2005 թ.-ին մեծ շուրջով նշեց իր 8-րդ տարեդարձը: Յիմնադրման օրից այն դիմանմիկ կերպով զարգանում է և ներկայումս կարող է ներկայացնել խոշորագույն տեղական և միջազգային կազմակերպությունների շահերը, գրասենյակի իրավաբանները աշխատում են երկրի առաջատար ընկերությունների հետ: «Մագիստրոս և ընկերներ» իրավաբանական ընկերությունը մեծ հեղինակություն է վայելում արքիտրաֆային և դատական պրակտիկայի ասպարեզում: Նրանք ներկայացնում են հաճախորդների շահերը ընդհանուր և հատուկ արքիտրաֆային դատավարություններում: Ուկրաինայում, Եվրոպայում և ԱՊՀ երկրներում, ինչպես նաև օգտագործում են վեճերի լուծման այլընտրաքային եղանակներ: «Մագիստրոս և ընկերներ»-ի աշխատակազմի կողիցը կազմում են նոր սերնդի իրավաբանները: Ընկերությունը գտնում է, որ Ձեսափի մրցույթը նպաստում է Ուկրաինայի երիտասարդության իրավագիտակցության ու կրթության որակի բարձրացմանը: Արդեն 3 տարի է, որ մրցույթն անց է կացվում Ուկրաինայի Գերագույն տնտեսական դատարանի նախագահի հովանավորությամբ՝ գերագույն տնտեսական դատարանի նիստերի դահլիճում:

Մրցույթի դատավորների կազմում ամեն տարի ընդգրկվում են համաշխարհային ճանաչում ունեցող ընկերությունների առաջատար իրավաբաններ՝ Ուկրաինայից և արտերկրից: Ի դեպ մրցությունը անց է կացվում անգլերենով, ինչը, «Մագիստրոս և ընկերներ» իրավաբանական ընկերության կարծիքով, նպաստում է ուսանողների աշխարհայացքի ընդլայնմանն ու մասնագիտական բնագավառում անգլերեն լեզվի զարգացմանը:

Մերսիկայում Ձեսափի մրցույթը կազմակերպում է Միջազգային և համեմատական իրավունքի փորձագետների խորհրդ՝ COLADIC: Այն բազմազգ, ոչ կառավարական, ակադեմիական մարմին է, որը իիմնադրվել է լատինամերիկյան ինը երկրների կողմից 1994թ.-ին՝ Մեխիկոյում: Խորհրդությունը կազմված է ուսանողներից, որոնց միավորում է ընդհանուր հետաքրքրությունը միջազգային և համեմատական իրավունքի ոլորտներում: Կազմակերպության առաքելությունն է աջակցել ուսանողների միջազգային համայնքի կրթությանը, առաջադեմ ուսանողներին և այն բոլորին, որոնք կիսում են կազմակերպության հետաքրքրություններն ու առաքելությունը: Այն իր համախոհների հետ աշխատում է միջազգային համայնքի վիճակարությաց խնդիրների լուծման, իրավունքի գերակայության և ժողովորակարության հաստատման ուղղությամբ:

Բրազիլիայում Ձեսափի մրցույթը տարբեր տարիների կազմակերպվել է երկու մի շարք համալսարանների կողմից: 2006թ.-ին մրցույթի կազմակերպիչն էր Ոիո Գոանդէ դո Սուլի Կաթոլիկ Պոնտիֆիկատի համալսարանը: Յամալսարանի պատմությունը սկսվում է Մարիստա եղբայրություն եկեղեցական միությունից, որ իիմնադրվել է 1817թ.-ին Լիոն քաղաքի մոտակայքում: 1900թ.-ին եղբայրության վանականները առաջին անգամ այցելեցին Ոիո Գոանդէ դո Սուլ՝ տեղի եպիսկոպոսի իրավերությունը: Այդ օրվանից եղբայրության վանականները, միշտ հավատարիմ մնալով Մարիստա եղբայրության՝ ուսուցանելու սկզբունքին, Եվրոպայից դուրս՝ տարբեր երկրներում հիմնադրեցին ուսումնական կենտրոններ, որոնք համապատասխանում էին տեղի պահանջմունքներին: Այժմ համալսարանը կազմակերպում է Ձեսափի մրցույթը՝ մի շարք նպատակների իրականացման ուղղությամբ: Խթանելու համար միջազգային իրավունքի ուսուցումը, իրավաբանական կրթության զարգացումը, ուսանողների կողմից գրավոր աշխատանքների կազմական փորձը և բանավոր հմտությունների զարգացումը: Կազմակերպիչները բավականին լուրջ պահանջներ են դնում մասնակցել ցանկացողների համար՝ միջազգային իրա-

Վունքի իմացություն, հատկապես տվյալ տարրվա թեմայի վերաբերյալ, անգլերենի տիրապետում գրավոր աշխատանքների՝ անգլերենով կազմնան և բանավոր ելույթների համար: Մրցույթի բանավոր փուլը 2006թ.-ին անցկացվել է համալսարանի կենտրոնական մասնաշենքում:

Ուսաստանում «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը հանդիսանում է Ուայթ էնդ Քերության մուկովյան գրասենյակի կողմից իրականացվող ամենակարևոր բարեգործական ծրագիրը: Ընկերության մուկովյան գրասենյակը բացվել է 1991թ.-ին և բավականին աշխատանք կատարել երկիր անցումային շրջանում: 2005թ.-ին The International Financial Law Review հանդեսի կողմից արժանացել է «2005թ.-ի Ուսաստանի իրավաբանական ընկերություն» կոչմանը: Ընկերությունն ունի քսանինգ ներկայացուցչություններ աշխարհի տարբեր ծայրերում: Ընկերությունը լայնածավալ բարեգործական աշխատանքներ է իրագործում հատկապես ՀԿ-ներին անվճար խորհրդատվություն մատուցելու ուղղությամբ, ինչպես նաև մասնակցում և անդամակցում է տարբեր բարեգործական նախաձեռնությունների: Ջեսափի մրցույթի անցկացմանն աջակցելու ունի ոչ միայն մասնագիտական, այլև սոցիալական դրդապատճառներ, քանի որ դրանով ընկերությունը պատրաստում է ինչպես իր ապագա գործընկերներին, այնպես էլ վաղվա հասարակության ակտիվ մի հատվածի: Ջեսափին մասնակցում են Ուսաստանի տասնչորս տարածաշրջանների իրավաբանական բուհերի ուսանողներ:

Ղազախստանում Ձեսափի կազմակերպվում է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության (ABA/CEELI) գրասենյակի կողմից: ABA/CEELI-ն ունի իր ներկայացուցչությունը Ալմա-Աթայում: Իր ծրագրերի ընթացքում ABA/CEELI-ն աշխատել է Ղազախստանի իրավաբանների, ուսանողների ու դատավորների հետ: Իրավաբան ուսանողների համար CEELI-ն կազմակերպում է տարաբնույթ ուսուցումներ և հանդիսանում է Ղազախստանում Ձեսափի մրցույթի ազգային կազմակերպիչը: CEELI-ն Ղազախստանում իրաբանական աջակցություն է ցուցաբերում մամուլի միջոցներին, նպաստում է կրթական համակարգի բարեփոխումներին և իրավաբան ուսանողների զարգացմանը՝ գտնելով, որ Ղազախստանի իրավաբանների նոր սերունդը պետք է կրի անհրաժեշտ հմտություններ ու գիտելիքներ և ներդնի դրանք քաղաքացիական հասարակության և իրավունքի գերակայության հաս-

თათონან გორծილ: CEELI-ին իրականացնում է մրցույթի կազմակերպումը և գთնում, որ մրցույթը հնարավորություն է ստեղծում ուսանողների համար՝ զարգացնել ու կիրառել իրենց գրավոր ու բանավոր փաստաբանական հմտությունները, տիրապետել դատավարական մարտավարությանն ու միջազգային իրավունքի դրույթներին;

Այսպիսով՝ աշխարհի տարբեր ծայրերում այսօր գիտակցվում է մոցույթի օգտակարությունն ու անհրաժեշտությունը և ամենահեռակավոր հանալսարանները, կազմակերպություններն ու ընկերությունները անշահախնդրորեն աջակցում են մոցույթին:

Աշխարհի տարբեր երկներից մրցույթին մասնակցած իրավաբաններն այսօր շարունակում են համատեղել իրենց ջանքերը միջազգային իրավաբանական կրթության ու միջազգային իրավունքի զարգացման գործում։ Շատերի համար Ձեսափն ավելին է, քան ուղղակի մրցույթ, այն յուրօրինակ մի միություն է, որի անդամները անընդհատ փոխանակում են իրենց փորձն ու հմտությունները, և փոխանցում այդ անգնահատելի ուժը ապագա սերնդին:

Մրցույթի անցկացման կարգն ու կանոնները

«Ֆ.Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի անցկացման կարգը միևնույն է մրցույթին նաևնակցող բոլոր երկրներում: Մրցույթի կազմակերպման ու անցկացման ընդհանուր կարգը սահմանվում է մրցույթի պաշտոնական կանոններով, իսկ յուրաքանչյուր երկրի ազգային փուլի առանձնահատկությունները՝ ազգային կառավարչի կողմից պաշտոնական կանոնների հիման վրա կազմվող ազգային կանոններով:

Ձեսափի մրցույթը բաղկացած է ազգային և միջազգային մրցափուլերից: Ազգային մրցափուլերի արդյունքում յուրաքանչյուր երկրի հաղթող թիմ իրավունք է ստանում մասնակցել մրցույթի միջազգային մրցափուլին: Վերջինս ավանդաբար անց է կացվում ԱՄՆ մայրաքաղաք Կաշինգթոնում: Մրցույթն անց է կացվում պաշտոնական կանոնների և հաստատված ժամանակացույցերի համաձայն՝ երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Ազգային մրցափուլի սկիզբը հայտարարելուց առաջ՝ մրցույթի ազգային կառավարիչը կազմում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ցանկը։ Այսուհետև, մրցույթի գործադրի

Հայաստանի Հանրապետությունում նրբույթն անց է կացվում հայերեն լեզվով: Սակայն պլանավորվում է, որ մոտ ապագայում եղանակիչ փուլը կանցկացվի անգլերենով:

Թիմեր: Մրցույթին մասնակցելու նպատակով յուրաքանչյուր բոլի հրավունք ունի ներկայացնել միայն մեկ թիմ՝ բաղկացած 2-5 հոգուց: Մրցույթին կարող են մասնակցել միայն այն ուսանողները, ովքեր ստանալու են հրավարանի կամ միջազգային հրավունքի մասնագետի որակավորման (աստիճան) վկայական, ընթացիկ ուսումնական տարրում դեռևս հանդիսանում են տվյալ բուհի կամ դպրոցի ուսանող և նախատեսում են իրենց ուսումնական հաստատության կողմից մասնակցել Մրցույթին, ցանկացած տեսակի հրավունքի աստիճան շնորհող ծրագիր ավարտելուց հետո չեն ներգրավվել հրավարանական մասնագիտական աշխատանքում հրավունքի որևէ ոլորտում:

Թիմերի անդամները հավաքագրվում են մրցաշրջանին համապատասխանող ուսումնական տարրա ընթացքում՝ միայն մեկ բուլիի ուսանող հանդիսանալու դեպքում:

Եթե անձը միջբուհական համատեղ ծրագրերի շրջանակներում կամ հատուկ դասընթացներում հյուրընկալությանք ուսանող է, կամ ընդգրկված է մեկից ավելի ուսումնական հաստատություններում կամ էքստեռն ուսումն ու պրակտիկան նրա ուսումնառության մաս են կազմում կամ լիազորույթ ուսանող է, որը հավակնում է իրավունքի մագիստրոսի (ԻՄ) կամ համարժեք կոչման, ապա նա կարող է մասնակցել մրցույթին միայն Գործադիր տօնօրենի գրավոր թույտվությամբ :

Թիմերի անդամները կարող են ընտրվել տվյալ բուհի համապատասխան մարմնի կողմից հաստատված ցանկացած եղանակով: Եթե նույն բուհից հիմքից ավելի ուսանողներ կամ ավելի քան մեկ ամբողջական թիմ է ցանկանում մասնակցել մրցույթին, ապա բուհի համապատասխան մարմննը ներբռուհական մրցույթի արդյունքում պետք է որոշի բուհը ներկայացնող թիմը: Ներքին

մրցույթը պետք է անցկացվի մրցույթի պաշտոնական կանոններին համապատասխան: Եթե ներքին մրցույթում օգտագործվում են Ձեսափի դատական գործերը, ապա պետք է Վերցվեն միայն անցած դատական գործերը և ոչ թե ընթացիկ տարվա մրցույթի դատական գործը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է գործադիր տնօրենի գրավոր համաձայնությունը:

Թիմի անդամների ընտրության հարցում պետք է լինել ուշադիր, քանի որ մրցույթը թիմային է, և շատ կարևոր են ոչ միայն թիմի անդամների գիտելիքները, այլ նաև թիմային զգացողությունը, որպեսզի յուրաքանչյուր մասնակից պատրաստ լինի գնալ զիջումների հանուն թիմի հաջողության:

Մրցույթի ազգային մրցափուլին կարող է մասնակցել տվյալ երկրի բուհուն ուսանող ցանկացած անձ՝ անկախ ազգային պատկանելությունից: Ազգային կառավարիչները չեն կարող, առանց գործադիր տնօրենի գրավոր համաձայնության, ազգային պատկանելությանը վերաբերող պահանջներ դնել՝ իրենց որևէ բուհ ներկայացնող թիմ կազմավորելիս: Նրանց դիմումի մեջ պետք է հստակորեն շարադրված լինեն նման պահանջի հիմքերը և կցվեն ազգային կանոնների հավելվածին: Գործադիր տնօրենի անհամաձայնության դեպքում մասնակից բուհի բոլոր ուսանողներն իրավունք կունենան ներգրավվել տվյալ թիմում:

Մոցույթի մասնակցության հայտ: Թիմեր կազմելուց հետո բուհերի ուսանողները նրգույթի մասնակցության հայտ են ներկայացնում կազմակերպիչներին: Յայտն իրենից ներկայացնում է թիմուն ներգրավված ուսանողների անձնագրերի, ուսանողական տոմսերի պատճենները, տվյալ բուհից տեղեկանք առ այն, որ թիմի անդամն այդ բուհի ուսանող է և որ կուրսում է սովորում, ինչպես նաև տեղեկություններ թիմի ավագի, թիմի մարզչի և թիմի անդամների վերաբերյալ (հասցե, հեռախոս, էլ.փոստի հասցե): Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ մեկ կամ մի քանի մարզիչ և/կամ, խորհրդատու, սակայն թիմերը չպետք է ունենան մեծ թվով մարզիչներ կամ ֆակուլտետի խորհրդատուներ, քան անհրաժեշտ է թիմին արդար նրգույթին համապատասխան կերպով մասնակցելուն պատրաստելու համար:

Սահմանված ժամանակամիջոցում բուհերից ստանալով մրցույթին մասնակցելու հայտերը՝ ազգային կառավարիչը լրացնում է գրանցման համապատասխան ձևեր, որոնք ուղարկվում են Վաշինգտոն՝ մրցույթի գործադիր տնօրենին:

Մրցույթին ավելի լավ պատրաստվելու համար գրանցված թիմերի անդամների հետ մրցույթի ազգային կառավարիչը գրավոր

և բանավոր մրցագիրը կազմակերպում է սեմինար-ներ՝ նվիրված փաստաբանական գրավոր և բանավոր հմտություններին, յուրաքանչյուր մրցագիրի անցկացման կարգին և այլն:

Նյութերի փաթեթներ: Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելուց հետո թիմերը ստանում են նյութերի երկու փաթեթները, որոնք օգնում են թիմերին հետազոտություններ կատարելու և գրավոր աշխատանքները՝ հայցադիմումները կազմելու գործում։ Վերջիններս ուղարկվում են մրցույթի գործադիր գրասենյակից։ Այդ նյութերը տրամադրվում են՝ ընդհանուր միջազգային իրավունքի և մրցույթի իրավական խնդրի վերաբերյալ թիմերին ընդհանուր պատկերացում և ուղղություն տալու նպատակով։ Ընդունում, որպես կանոն, նյութերի 2-րդ փաթեթը կազմվում է՝ հաշվի առնելով ամբողջ աշխարհում մրցույթին մասնակցող թիմերի հարցումները։

Նյութերի փաթեթներն իրենից ներկայացնում են միջազգային պայմանագրեր, դատական նախադեպեր, գիտական հողվածներ կամ այլ տեսակի նյութեր: Թիմերին թույլատրվում է իրենց հետազոտությունը կատարելիս օգտվել այդ նյութերից և իրենց հայցադիմումներում կամ բանավոր ելույթներում հղում անել դրանց, պայմանով, որ հայցադիմումի մեջ այդ նյութերին հղում անելիս պետք է նշել դրանց աղբյուրը:

2004թ.-ից Զեսափի մրցույթին մասնակից թիմերի համար ան-նախադեպ հնարավորություն ստեղծվեց. թիմերին գործադիր տնօ-րենի կողմից տրամադրվում է Թոնսոն ընկերության նասնաճյուղի՝ «West»-ի WESTLAW օն-լայն իրավաբանական տվյալների բազա-յի մուտքի ազատ գաղտնաբառ (<http://www.westlaw.com>): Վեր-կայքը իրենից ներկայացնում է իրավաբանական շտեմարան և թիմերին հնարավորություն է ընձեռում ծանոթանալ Միջազգային Դատարանի կողմից քննված գործերին, դատական պրակտիկայի տարրեր դեպքերը քննարկող հոդվածներին, ինչպես նաև տար-բեր երկրների դատարանների կարած գործերի հետ:

Հայցադիմումներ: Մրցույթի գրավոր փուլին մասնակցելու համար, ազգային կանոններով սահմանված ժամկետում, մրցույթին մասնակցող յուրաքանչյուր թիմ պետք է պատրաստի հայցվորի և պատրաստանողի հայցադիմումներ: Բոլոր հետազոտությունների, գրավոր նյութերի և խնճագրական աշխատանքների հեղինակները պետք է լինեն թիմի անդամներ: Սակայն թիմին խորհուրդներով կարող են օգնել ֆակուլտետի դասախոսները, մարզիչները, գրադարանները, այլ մասնագետ հետազոտողներ, ինչպես նաև

այլ խորհրդատուներ: Այսպիսի խորհրդատվությունը պետք է սահմանափակվի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին առնչվող ընդհանուր քննարկմանը, հետազոտության աղբյուրներին առնչվող առաջարկություններով, բանավոր խոսք տեխնիկայի վերաբերյալ խորհրդատվությանը, իրավաբանական հետազոտության ընդհանուր մեթոդների ներկայացմանը, ընդհանուր մեկնաբանություններով և փաստարկների կառուցվածքին առնչվող հարցերով, ուղղություն տրվի իրավաբանական աղբյուրների վերաբերյալ, հայտարարության տարբերակների ընտրության մեջ կողմնորոշմանը, փաստարկների ներկայացման հերթականությամբ և ձևով, ինչպես նաև մրցույթի ընտրական փուլերի ընթացքում հայտարարությունների ներկայացման ձևի և մարտավարությունների վերաբերյալ:

Զեսափի մրցույթն անաշառության և օբյեկտիվության նկատառումներով անց է կացվում անանուն: Ազգային կառավարիչների կողմից թիմերի գրանցման ձևերը գործադիր տնօրենի կողմից ստանալուց հետո, վերջինիս կողմից թիմերին տրվում է համարները: Թիմերը ամբողջ մրցույթի ընթացքում պետք է դատավորներից գաղտնի պահեն իրենց հնքնությունը (բուհը, երկիրը): Կազմակերպիչը կարող է որակազորել կամ տուգանել այն թիմին, որը դիտավորյալ կամ անփութության հետևանքով դատավորներից որևէ մեկին հայտնել է իրենց թիմի՝ բուհի կամ տվյալ պետության պատկանելիության մասին տեղեկություններ, անկախ այն հաճգամանքից, թե արդյոք այդ դեպքը տեղի է ունեցել բանավոր փուլի ընթացքում, թե ոչ:

Յուրաքանչյուր հայցադիմում պետք է պարունակի տվյալ թիմի համարը: Այն պետք է գետեղված լինի հայցադիմումի շապիկի վերին աջ անկյունում: Դամարից հետո, հայցվորի կարգավիճակի դեպքում, կնշվի «A», իսկ պատասխանողի դեպքում «R»: (Օրինակ՝ 000-Ա-Ն կդրվի 000 համարով Դայցվոր թիմի հայցադիմումի վրա):

Մասնակիցների, պետությունների և/կամ բուհերի անունները չպետք է նշվեն հայցադիմումի վրա կամ նրանում: Արգելված նշում պարունակող էջերը չեն օգտագործվում: Մրցույթի կառավարիչները ջնջում են թիմերի անդամների կամ բուհերի անունները՝ նախքան հայցադիմումը դատավորներին հանձննելը:

Գործադիր տնօրեննը չպետք է հրապարակի թմների ինքնությունը: Այնուամենայնիվ, այն պարագայում, եթե դատավորը գտնում է, որ այս կամ այն հայցադիմումի գնահատումը ավելի արդյունավետ կլինի, եթե նրան տեղեկատվություն տրամադրվի

տվյալ թիմի նայրենի լեզվի մասին, ապա դատավորը կարող է գործադիր տնօրենին դիմել՝ ճշտելու, թե արդյոք տվյալ թիմի նայրենի լեզուն անզերենն է, թե՝ ոչ:

Պաշտոնական կանոններով հայցադիմումների կառուցվածքին ներկայացվում են որոշակի պահանջներ: Հայցադիմումները պետք է բաղկացած լինեն հետևյալ նաև:

- ա) Տիտղոսաթերթ,
բ) Բովանդակություն,
զ) Օգտագործված գրականություն՝ համապատասխան էջա-
համարներով,
դ) Ընդդատության դիմում,
ե) Ներկայացվող հարցեր,
զ) Փաստերի շարադրանք,
է) Հայտարարությունների համառոտագիր,
ը) Հայտարարությունները՝ ներառյալ եզրակացությունն ու
պաշտպանության մասին խնդրանքը:

Մրցույթի ազգային ժամանակցույցով սահմանված ժամկետներում թիմերը պետք է գրավոր աշխատանքները ներկայացնեն ազգային կառավարչին, որից հետո դրանք ուղարկվում են մրցույթի դատավորներին՝ գնահատման: Յուրաքանչյուր հայցադիմում գնահատվում է երեք դատավորների կողմից : Թիմերի ներկայացրած հայցադիմումները դատավորների կողմից գնահատվելուց հետո վերանայվում են ազգային կառավարչի կողմից՝ հայցադիմումի համար Պաշտոնական կանոններով սահմանված ֆինունշտատներից շեղումների դիմաց մրցույթի սահմանված հայեցողական տույժեր նշանակելու համար:

Մրցույթի դատավորները: Մրցույթի դատավորները կազմում են մրցույթի հաջող անցկացման կարևորագույն օդակը, և նրանց ընտրությունը բավականին պատասխանատու գործ է ազգային կառավարչի համար: Սովորաբար հայցադիմումները հաճանելու համար սահմանված ժամկետից 1,5-2 ամիս առաջ, ազգային կառավարչը կազմում է մրցույթին որպես դատավոր ներգրավվելիք անձանց նախնական անվանացանկը, և նրանց ուղարկվում են հրավերք-նամակներ: Անհրաժեշտության դեպքում մրցույթի Ազգային կառավարիչն անձանք հանդիպում է մրցույթի դատավորների թեկնածուների հետ և նրանց ներկայացնում տեղեկատվություն մրցույթի վերաբերյալ: Այնուհետև, կազմում են մրցույթին որպես դատավոր ներգրավվելիք անձանց վերջնական անվանացուցակը:

Համաձայն մրցույթի պաշտոնական կանոնների՝ հնարավո-

Մրցույթի ոչ մի փուլում որևէ ֆակուլտետի խորհրդատու, մարդու կամ թիմի հետ կապ ունեցող ցանկացած անձ իրավունք չունի հանդես գալ որպես դատավոր, քանի դեռ նրանց թիմը մրցույթից դուրս չի մնացել։ Բացառություններ կարող են լինել միջազգային մրցափուլի ժամանակ, երբ տվյալ անձնափորությունը հանդես է գալիս որպես դատավոր այն բանավոր մրցափուլի ժամանակ, երբ իր բուհի ներկայացրած թիմը չի մասնակցում տվյալ մրցափուլին, կամ էլ հանդես է գալու մեկ այլ մրցափուլի ժամանակ։

Մրցույթի ցանկացած փոլում և մակարդակում բացառվում է որևէ դատավորի նասնակցությունը մրցույթին, որը կապ ունի այն բուհի հետ, որը թիմ է ներկայացրել, ծանոթ է կամ այլ կերպ հարաբերվում է վերջինիս հետ, ինչը կարող է ամճշտությունների տեղիք տալ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրվում է գործադիր տնօրեննի կողմից: Դատավորի՝ տվյալ բուհի շոշանակարտը լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ դա՝ որպես խախտում դիտարկելու համար: Դատավորները պետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն տվյալ թիմի ելույթը գնահատելուց, եթե նրանք անձնական կամ մասնագիտական հարաբերություններ ունեն տվյալ բուհի հետ կամ տվյալ թիմի որևէ անդամի հետ, և, եթե այդ կազմը կարող է ազդել նրանց անկողմնակալության վրա կամ ավելորդ անճտությունների տեղիք տալ: Այնուամենայնիվ, դատավորները չենու է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն մրցափուլին մասնակցելուց, եթե նրանք պարզապես ծանոթ են տվյալ թիմի անդամին, կամ տվյալ բուհի հետ որոշակի հարաբերություններ ունեն, կամ դրա անդամ են հանդիսանում:

Մրցույթի դատավորներին խորհուրդ է տրվում բանավոր մրցափուլի ավարտից հետո թիմներին խրախուսական խոսք հղել

իրենց ելույթների վերաբերյալ: Դատավորներին առաջարկվում է նաև կատարել որոշակի մեկնաբանություններ, սակայն նրանք թիմերին չպետք է տեղեկացնեն իրենց անձնական կարծիքի կամ թիմի հավաքած ընդհանուր միավորների մասին, ինչպես նաև չպետք է ներկայացնեն այնպիսի տեղեկատվություն, ինչը կմատնանշի նրանց անձնական դիրքորոշումը և դատավորների հուշագրի բովանդակությունը:

Օգնականներ և հաշվողներ: Մրցույթի կազմակերպման և բնականու ընթացքն ապահովելու գործում մեծ նշանակություն ունեն դատավորի օգնականներն ու հաշվողները: Մրցույթի կառավարիչները, պաշտոնական կանոնների համաձայն, կազմում են վերջիններիս նախական անվանացանկը: Վերը նշված անձանց անվանացանկի հաստատվելուց հետո ազգային կառավարիչը նրանց հետ անց է կացնում սեմինար խորհրդատվություն, որի ընթացքում դատավորի օգնականներին և տուգանային միավորները հաշվողներին հանգանանորեն բացատրվում է մրցույթի ընթացքում իրենց կողմից իրականացվելիք գործունեության եռլունը և տրամադրվում համապատասխան փաստաթղթեր: Նրանցից յուրաքանչյուրին տրվում է այն լսարանների համարները և այն դատավորների անվանացանկը, ում հետ նրանք պետք է աշխատեն մրցույթի ժամանակ:

Մինչև մրցույթի բանավոր փուլը՝ մրցույթի դատավորների համար ևս կազմակերպվում է խորհրդատվական սեմինար, որի ժամանակ դատավորներին տրամադրվում է մրցույթի պաշտոնական կանոններով նրանց համար նախատեսված նյութերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Մինչև մրցույթի բանավոր փուլը՝ սահմանված ժամակացույցի համաձայն, թիմերի անդամների ներկայությամբ կատարվում է վիճակահանություն, որի արդյունքում որոշվում են մրցույթի բանավոր փուլի նախնական մրցափուլերին մրցող թիմերի գույքերը:

Բանավոր փուլ: Հայաստանյան մրցափուլի բանավոր փուլը սովորաբար տևում է երկու օր: Առաջին օրը անցկացվում են մրցույթի 1-ին, 2-րդ, 3-րդ նախնական մրցափուլերը, երկրորդ օրը՝ մրցույթի 4-րդ նախնական, կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերը:

Մրցույթի բանավոր փուլն ունի իր առանձնահատկություններ՝ յուրաքանչյուր թիմ 2 անգամ հանդես է գալիս որպես հայցվոր, 2 անգամ՝ որպես պատասխանող: Մրցույթի բանավոր փուլը բաղկացած է հայտարարություններին հատկացված իննուուն (90) րոպեից: Յուրաքանչյուր կողմին տրվում է քառասունինգ (45) րո-

պե: Բանավոր մրցափուլն սկսելուց առաջ յուրաքանչյուր թիմ պետք է նախօրոք նախազգուշացնի դատավորի օգնականին, թե ինչպես են իրենք ցանկանում օգտագործել իրենց տրամադրված 45 րոպեն, այսինքն, թե ինչպես է այդ ժամանակը բաշխվելու ա) առաջին բանախոսի, բ) երկրորդ բանախոսի և գ) հայցվորի պնդման և դ) պատասխանողի առարկության համար:

Ոչ մի բանախոս չպետք է խոսի քսանինգ (25) րոպեից ավել՝ ներառյալ պնդումն ու առարկությունը: Մեկ բանախոսի համար նախատեսված և չօգտագործված ժամանակը չի կարող օգտագործվել ոչ այլ բանախոսի կողմից, և ոչ էլ պնդման և առարկության համար: Յուրաքանչյուր մրցափուլի ընթացքում տվյալ թիմի ցանկացած անդամ կարող է հանդես գալ որպես բանախոս: Մեկ մրցափուլի ընթացքում տվյալ թիմից կարող են հանդես գալ միայն երկու բանախոսները: Բացարիկ հանգանաքներում գործադիր տնօրենը կարող է միևնույն բանախոսին թույլատրել ելույթ ունենալ քսանինգ (25) րոպեից ավել: Միջազգային մրցափուլում թարգմանիչ օգտագործող թիմերին հատկացվում է լրացուցիչ ժամանակ: Ցանկացած մակարդակի որևէ մրցափուլում հայտարարությունների հերթականությունը հետևյալն է.

Հայցվոր 1

Հայցվոր 2

Պատասխանող 1

Պատասխանող 2

Պնդում (Հայցվոր1 կամ 2)

Առարկություն (Պատասխանող1 կամ 2):

Մրցափուլի սկզբում թիմերին թույլատրվում է վերապահել տասը (10) րոպե՝ պնդման և առարկության համար: Թիմի ամիսները դատավորի օգնականին պետք է նախքան մրցափուլի սկիզբը տեղյակ պահեն, թե արդյո՞ք իրենք կամենում են ժամանակ ստանալ այդ նպատակով և բանավոր հայտարարությունների սկզբում պետք է դա հայտնեն դատավորներին:

Չորս նախնական մրցափուլերի արդյունքում որոշվում են այն չորս թիմերը, որոնք դուրս են գալիս կիսաեզրափակիչ փուլ, իսկ կիսաեզրափակիչների հաղթողները դուրս են գալիս եզրափակիչ: Եզրափակիչ փուլի հաղթող թիմը դաշնում է չենափին և իրավունք է ստանում ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը միջազգային մրցափուլում, իսկ հակառակորդ թիմը ճանաչվում է երկրորդը: Մասնակի բոլոր թիմերի տեղերը որոշվում են նախնական փուլերից սկսած՝ նրանց գրաված տեղերի միջոցով: Մրցույթի արդյունքում որոշվում են նաև նախնական մրցափուլերի և

ամբողջ նրացութիւն լավագույն բանախոսները, ինչպես նաև լավագույն հայցադիմումը ներկայացրած թիմը:

Թիմերի ստացած միավորները: Մրցափուլում յուրաքանչյուր բանախոսի ստացած ընդհանուր միավորները որոշվում են բոլոր նախնական փուլերում նրա ընդհանուր միավորները գումարելու միջոցով (հաշվի առնելով բանախոսի ստացած բոլոր տուգանային միավորները), և այդ ընդհանուր թիվը բաժանելով բանախոսի մասնակցած բոլոր նախնական մրցափուլերի թվի վրա: Բանախոսների գրաված տեղերի սանդղակը կազմվում է՝ սկսելով ամենաքարձր միավորներից:

Յուրաքանչյուր թիմի հայցադիմումի ընդհանուր միավորները որոշվում են տվյալ թիմի հայցվորի հայցադիմումի և պատասխանողի հայցադիմումի ընդհանուր նախնական միավորները գումարելու միջոցով՝ վեց դատավորների գնահատած ընդհանուր միավորներով, որոնց առավելագույն հնարավոր գումարը կազմում է 600: Թիմերի հայցադիմումների գրաված տեղերի սանդղակը կազմվում է սկսելով ամենաբարձր միավորներ շահած հայցադիմումից: Միավորները հաշվելիս հաշվի են առնվում թիմերի ստացած տուգանքները:

Մրցույթի ընթացքում մրցույթի կառավարիչը հրավունք ունի թիմերին նշանակելու տույժեր: Կառավարչի այդ հրավասությունը կարելի է բաժանել երկու խմբի՝ ոչ հայեցողական և հայեցողական տույժեր: Հայեցողական և ոչ հայեցողական տույժերը թիմերի նկատմամբ կարող են կիրառվել կամ ընդհանուր կամ մասնավոր կարգով: Ընդհանուր տույժերը բխում են ընդհանուր տիպի խախտումներից և կիրառվում են թիմի նկատմամբ նրա բոլոր մրցափուլերում, ասենք՝ հայցադիմումը կառավարչին ուշ առաջելու համար:

Սասնավոր տույժը մասնավոր խախտում է ենթադրում և կիրավուն է թիմի նկատմամբ կոնկրետ մրցափուլում, ասենք՝ հայցադիմումը որևէ թիմի ուշ առաքելու համար կամ կոնկրետ մեկ թիմի հանդեպ խափանարար վարքագիծ ցուցաբերելիս։ Բոլոր տույժերը կիրառվում են առանձին վերցրած յուրաքանչյուր դատավորի նշանակած միավորների համար։ օրինակ՝ տասնինգ (15) միավորի տույժը, բազմապատկված երեք (3) դատավորով, միագումար կերպով կունենա քառասունինգ (45) միավորի ազդեցություն։ Յուրաքանչյուր թիմի նվազագույն արդյունքը մեկ դատավորի հաշվով հիսուն (50) միավոր է։ Նվազագույն հաշվին հասնելուց հետո արդյունքներն այլևս չեն կրճատվում՝ անկախ տույժերի առկայությունից։

Մրցույթին մասնակցած յուրաքանչյուր թիմ մրցույթի ավարտից հետո ազգային կառավարչի կողմից ստանում է հետևյալ փաթեթը:

ա/ հայցադիմում գնահատող յուրաքանչյուր դատավորի գնահատման թերթիկի և նշանակված տուգանքների (Եթե այդպիսիք կան), ինչպես նաև կցված դիտողությունների (Եթե այդպիսիք կան) պատճենը,

թ/ նրացափուկի նախնական փուլերում բանավոր ելույթները գնահատող յուրաքանչյուր դատավորի գնահատման թերթիկի և նշանակված տուգանքների (Եթե այդպիսիք կան), ինչպես նաև կցված դիտողությունների (Եթե այդպիսիք կան) պատճենը,

գ/ մրցափուլի նախնական փուլերի բոլոր գրաված տեղերի սանդղակների պատճենը՝ Եթրայալ հաղթանակների և պարտությունների գրանցված միավորների ընդհանուր գումարները, բոլոր նախնական միավորների գումարը և բոլոր փուլային միավորների գումարը,

- Ե/ մրցափուլի նախնական փուլերում հայցադիմումների գրաված տեղերի սանդղակների պատճենը՝ ներառյալ բոլոր ընդհանուր հայցադիմումների միավորները և

զ/ մրցափուլի միջանկյալ փուլերի ամփոփումը

Մրցույթի ավարտից հետո հաղթող թիմի և լավագույնը ճանաչված հայցադիմումները բարգմանվում են և սահմանված ժամանակատվածում ուղարկվում են Վաշինգթոն, ինչպես նաև տարփում են աշխատանքներ հաղթող թիմի մասնակցությունը միջազգային մրցափուլին ապահովելու նպատակով:

Անեն տարի գարնանը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում ընթացող միջազգային մրցափուլին մասնակցում են ազգային և տարածաշրջանային մրցութենքում հաղթող թիմեր:

Միջազգային մրցավորություն բաղկացած է 4 նախնական, 1/8-րդ, քառորդ եզրափակիչ, կիսաեզրափակիչ և եզրափակիչ Զեսափի Մրցություն Աշխարհի Գավաթի խաղաղության մոգակիւն ենից:

Զեսափի մրցույթի աշխարհի զավաքի հաղթող ճանաչված բի-
մը հրապարակում է Զեսափի աշխարհի զավաքի հետապնդություն:

Մրցույթի միջազգային մրցափուլի առաջին օրը տեղի է ունենում բացման արարողությունը, երբ կազմակերպիչները ներկայացնում են թիմերը և բաժանում են որոշ նյութեր (մրցույթի ժամանակացույց, հուշանվերներ): Բացման արարողությունը նաև ա-

կիցների համար լավ հնարավորություն է նախապես տեղեկանալու թե որ ԲՈՒՀ-ի թիմը որ համարն ունի (միջազգային փուլում թիմերի ինքնությունը գաղտնի է միայն դատավորների համար, մասնակիցները ազատ են այն միմյանց հայտնելու): Նույն օրվա երեկոյան տեղի է ունենում վիճակահանությունը, որի արդյունքներով թիմերին տալիս են իրենց անհատական ժամանակացույցը և հակառակորդ թիմերի գրավոր հայցադիմումները: Ինչպես նշում են միջազգային մրցափուլին մասնակցած հայ ուսանողները՝ վիճակահանության արդյունքները բախտորոշիչ դեր են ունենում թիմի համար, քանի որ թույլ կան ուժեղ հակառակորդների հետ մրցելը էապես ազդում է 1/8 եզրափակիչ դուրս գալու հավանականության վրա:

Քաջորդ օրը սկսվում է նախընտրական փուլը, որը տևում է չորս օր: Այդ ժամանակահատվածում յուրաքանչյուր թիմ ունենում է 4 հանդիպում (խաղ): Միջազգային մրցափուլում հանդիպումների գրաֆիկը շատ ավելի ազատ է, քան ազգային մրցափուլում:

Մրցանակներ: Զեսափի մրցույթի աշխարհի Գավաթի խաղարկության ժամանակ տրամադրվում է երկու մրցանակ՝ հուշանվեր և Զեսափի գավաթը, որը չենափոխ կողմից մեկ տարի պահպան է տվյալ բուհում: Զեսափի մրցույթի աշխարհի գավաթի խաղարկության չենափոխ պատասխանատվությունը է կրում Զեսափի Գավաթի պահովության համար այնքան ժամանակ, քանի դեռ այն գտնվում է իր տիրապետության ներքո, և պարտավորվում է նախքան հաջորդ տարվա միջազգային մրցափուլը Զեսափի գավաթը պատշաճ կարգով վերադարձնել գործադիր տնօրենին:

Ազգային և տարածաշրջանային մրցափուլերում լավագույնը ճանաչված հայցադիմումները մասնակցում են հայցադիմումների «Հարդի Դիլարդ» մրցանակի մրցույթին: «Հարդի Դիլարդ» մրցանակի խաղարկությունում լավագույնը ճանաչված ինձ հայցադիմումները մասնակցում են «Ոիշարդ Բաքստեր» մրցանակի մրցույթին:

Գյություն ունի Բաքստերի 2 մրցանակ. առաջինը սահմանված է լավագույն հայցվորի հայցադիմումի համար, իսկ երկրորդը՝ լավագույն պատասխանողի հայցադիմումի համար: Մրցանակը շնորհվում է լավագույն հայցվոր և լավագույն պատասխանող հայցադիմումներ ներկայացրած թիմերին: Բաքստերի մրցանակին արժանացած հայցադիմումները տպագրվում են ILSA-ի «Միջազգային և համեմատական իրավունք» ամսաթերթի համապատասխան տարվա համարում:

«Զեսափի Ոգին» մրցանակը առաջին անգամ ստեղծվել է 1996թ.-ին և նախատեսված է այն թիմի համար, որը Զեսափի մրցույթի ժամանակ լավագույնս է դրսևորում Զեսափի ոգին, այն է՝ ընկերություն, գերազանց ուսումնական առաջնորդաց, մրցակցություն և նրգակիցների արժանիքների ճանաչում: Մրցանակը տրվում է միջազգային մրցափուլի մասնակցիների ձայների մեծամասնությամբ կամ էլ ընտրվում է գործադիր տնօրենի կողմից՝ խորհրդակցելով թիմերի հետ: Մրցանակի հիմնական նպատակն է սահմանել չափորոշիչներ, որի շնորհիվ բոլոր մասնակիցները կճգտեն կառավարել իրենց գործունեությունը և մասնագիտական հմտությունները:

ԶԵՍԱՓԻ ՄՐՑՈՒՅԹԸ ՂԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մրցույթի պատմությունը Ղայաստանում

Աշխարհում ընթացող քաղաքական գործընթացները վկայում են, որ պետությունները աստիճանաբար ավելի մեծ շահագործակցելու կամ միավորվելու, միջազգային կազմակերպություններին անդամակցելու և միջազգային հանրության կողմից սահմանված ու իրենց արդարացրած չափանիշները պետության ներսում կիրառելու գործում: Այս գործընթացներից զերծ չի մնում նաև Ղայաստանի Ղանրապետությունը: Խև միջազգային զարգացումներից հետ չմնալու համար պետք է լիովին տիրապետել միջազգային իրավունքին, միջազգային սովորության իրավունքին ու միջազգային պրակտիկային:

Միջազգային չափանիշները սկսեցին կիրառվել նաև կրթական համակարգում, ինչի արդյունքում հայկական բուհերի իրավաբանական ֆակուլտետներում սկսեցին ոչ միայն պարտադիր կերպով ուսումնասիրել միջազգային իրավունքը, այլև գիտակցվեց ոչ ֆորմալ կրթության արդյունավետությունը և միջազգային փորձին անմիջականորեն հաղորդակցվելու անհրաժեշտությունը:

Միջազգային իրավունքի ոլորտին հայ հասարակությանը, հատկապես իրավաբան-ուսանողներին ծանոթացնելու նպատակով 2000թ.-ի նոյեմբերի 1-ին «Ղայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և Ա-

մերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվ-
րոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության (ABA/CEELI) հայաստանյան գրասենյակի կողմից Հայաստանում
ներդրվեց «Ֆիլիպ Շեսափի անվան միջազգային իրավունքի դա-
տախաղ» մրցույթը: Մինչև 2003թ.-ը մրցույթը կազմակերպվում էր
ՀԵԻԱ-ի և ABA/CEELI-ի կողմից, իսկ 2004թ.-ից մրցույթը կազմա-
կերպում է ՀԵԻԱ-՝ գործողներությամբ:

Իսկ ի՞նչ կարող է տալ մրցույթը Հայաստանի իրավաբանների նոր սերմին: Առաջին հերթին՝ մրցույթը լավագույն առիջ է ՀՀ իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ ծանոթանալու միջազգային և սպորտային իրավունքի նորմներին և նրանց կիրառնան առանձնահատկություններին, հաղորդակցվելու իրավագիտության զարգացման միջազգային փորձին, բանավիճելու միջազգային արդիական հիմնախնդիրների շուրջ: Մրցույթի ներմուծումը Հայաստան հնարավորություն ընծեռեց ուսանողներին իրենց գործնական իրավական գիտելիքները ազատորեն ներկայացնել և ձեռքբերել միջազգային իրավունքի, դատական նախաեապերի, փաստաբանական բանավոր և գրավոր հմտությունների փորձ: Այն թույլ տվեց դառնալ այն ցանցի մի մասնիկը, որն արդեն 47 տարի համախմբում է լավագույն համալսարանների և նրանց ուսանողներին:

Նախորդ ութ տարիների ընթացքում մրցույթին մասնակցել են հայաստանյան պետական և ոչ պետական բուհերի իրավաբանական ֆակուլտետների 52 թիմեր, իսկ հաղթող 8 թիմերը մասնակցել են Վաշինգտոնում անգակազմուի միջազգային մրցափուլին:

Զեսափի մրցույթի 2001թ.-ի ազգային մրցափուլում հաղթող ճանաչվեց Երևանի մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիրի իրավաբանական ֆակուլտետի թիմը, մրցույթի Երկրորդ մրցանակակիրն էր Սանկտ-Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, տնտեսության և իրավունքի հնստիտուտի Երևանի մասնաճյուղը: Հաղթող թիմի անդամ Սարգսի Կնյազյանը ճանաչվեց մրցույթի լավագույն բանախոս: 2001թ.-ի ապրիլին Վաշինգտոնում կայացած միջազգային մրցափուլում հայաստանյան թիմը 69 թիմերի շարքում զբաղեցրեց 60-րդ հորիզոնականը:

2002թ.-ին ազգային մրցափուլի երկրորդ մրցանակակիրը երևանի մենեջմենթի համալսարանի Գյումրու կրթահամալիրի հրավարանական ֆակուլտետի թիմն էր, իսկ հաղթողը՝ Երևանի պետական համալսարանի հրավարանական ֆակուլտետի թիմը։ Մրցույթի լավագույն բանախոս ճանաչվեց ԵՊՀ հրավարանական

ֆակուլտետի թիմի անդամ Հրաչյա Մարանգովյանը: Թիմը միջազգային մրցափուլում 75 թիմերի շարքում զբաղեցրեց 72-րդ հորիզոնականը:

2003 և 2004թթ.-ի ազգային մրցափուլերում հաղթեց կրկին Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի թիմը: 2003թ.-ի ազգային մրցափուլում Երկրորդ մրցանակին արժանացավ Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանի թիմը, իսկ Լավագույն բանախոս ճանաչվեց նույն թիմի անդամ Շուշանիկ Վարդանյանը: 2004թ.-ին Երկրորդ տեղում էր Մոսկվայի նոր իրավաբանական ինստիտուտի Երևանի մասնաճյուղը ներկայացնող թիմը, իսկ «Լավագույն բանախոս» մրցանակն ստացավ ԵՊՀ-ի թիմը ներկայացնող Եղիշե Կիրակոսյանը: 2003թ.-ին ԵՊՀ-ի թիմը մրցույթի միջազգային մրցափուլի 83 թիմերի շարքում 50-րդն էր, իսկ 2004թ.-ին՝ 94 թիմերի շարքում 52-րդը:

2005թ.-ի Ձեսափի մրցույթի ազգային մրցափուլում հաղթող ճանաչվեց Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի թիմը, իսկ լավագույն բանախոս ճանաչվեց նույն թիմի անդամ Արա Խզմայանը: Ազգային մրցափուլի երկրորդ մրցանակը ստացավ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի թիմը: Ապրիլին Վաշինգտոնում կայացած միջազգային մրցափուլում մեր թիմը զբաղեցրեց 80-րդ հորիզոնականը՝ 103 թիմերի շարքում:

2006թ.-ի ազգային մրցափուլի եզրափակիչում Ուլս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի թիմը հաղթեց ՄՅՈՒԴ իրավաբանական ինստիտուտի թիմին: «Լավագույն բանախոս» մրցանակը ստացավ հաղթող թիմի ներկայացուցիչ Արա Խօնալյանը: 2006թ.-ի միջազգային մրցափուլում ներ թիմը 99 թիմերից 89-ուն էր:

2007-ի հայաստանյան մրցափուլի եզրափակիչ փուլին մասնակցում էին Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի և «Եվրասիա» միջազգային համալսարանի թիմերը: Եզրափակիչ փուլում այս տարի ևս հսկող ճանաչվեց Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի թիմը, իսկ լավագույն բանախոս՝ նույն թիմի ավագ Արա Խօնավանը:

2007թ.-ի մարտի 25-ից ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում մասնակցելով մրցույքի միջազգային մրցափուլին՝ Ռուսիական (Սլավոնական) պետական համալսարանի հրավարանական ֆակուլտետը ներկայացնող թիմը միջազգային մրցափուլին մասնակցած 94 թիմերի շարքում գրավել է 54-րդ տեղը: Դայլական թիմի գրավոր աշխատանքը գրավել է 33-րդ տեղը հայցա-

Դիմումների «Հարդի Դիլարդ» մրցույթին մասնակցած 94 գրա-
վոր աշխատանքների շարքում:

2008թ.-ի հայաստանյան մրցափուլի եզրափակիչ փուլին մասնակցում էին Երևանի պետական համալսարանը և Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանը ներկայացնող թիմերը։ Հայաստանյան մրցափուլի հաղթող ճանաչվեց Երևանի պետական համալսարանի թիմը։

2008թ.-ի ապրիլի 6-ից 12-ն ընկած ժամանակահատվածում հայաստանյան թիմը Վաշինգտոնում մասնակցեց մրցույթի միջազգային մրցափուլին: Միջազգային մրցափուլին մասնակցող 110 թիմերի շարքում հայաստանյան թիմն գրավել է 90-րդ տեղը: Թիմի գրավոր աշխատանքը գրաղեցրել է 87-րդ տեղը:

Միջազգային մրցափուլում հայաստանյան թիմերի կողմից ցուցաբերվող ոչ բարձր արդյունքները, նրանց առջև ծառացող խնդիրները վկայում են, որ դեռևս բավականին անելիքներ կան կապված թե՝ լեզվի, թե՝ փաստարանական բանավոր հնտությունների և թե՝ այլ խնդիրների լուծման հետ, որոնց լուծմանն ուղղված քայլերը պետք է սկսել հենց հայաստանյան մրցափուլից՝ վերանայելով հայաստանյան մրցափուլի անցկացման կարգը:

«2008 Ֆ. Ձեսափի ամվան միջազգային իրավունքի դատախաղ»
մրցույթը Դայասատանում

Տարիներ շարունակ «Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթը աշխարհի գրեթե բոլոր երկրներում ծառայում է միասնական նպատակի՝ զարգացնելու երիտասարդ սերնդի իրավաբանների գիտելիքները միջազգային իրավունքի բնագավառում, պատրաստելու այդ ոլորտում հնուտ և բանհմաց իրավաբաններ: Արդեն ութերորդ տարին է մրցույթի այդ նպատակն իրագործվում է նաև Հայաստանի Հանրապետուրյունում:

«2008 ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլը կազմակերպվել էր Դայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի, Դայաստանի իրավաբանական հիմնարդանի և «ԼԻԳԼ ԸԼԱՅՆՍ» իրավաբանական ընկերության կողմից՝ ՀՀ-ում ԱՄ դեսպանատան աջակցությամբ։ Այս տարի կամ մրցույթի անցկացմանն իր աջակցությունն է ցուցաբերել նաև ՀՀ Դատական դեպարտամենտը, որը մրցույթի բանավոր փուլի անցկացման համար տրամադրել էր

«2008 ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի կազմակերպչական աշխատանքներն սկսվել են դեռևս 2007թ.-ի գարնանը, Զեսափի ակումբի համակարգողի՝ Երևանյան և նի շարք մարզային բուհեր կատարած այցելություններով: Այցելությունների նպատակն էր հայ իրավաբան-ուսանողների շրջանում մրցույթի նասսայականացումը, մրցույթի կարևոր դերն և նշանակությունը ներկայացնելը, ինչն էլ հանդիսանում է Դայաստանի Զեսափի ակումբի խնդիր-նպատակներից մեկը:

Հանդիպումների ընթացքում ուսանողներին ներկայացվեց մրցույթը, մրցույթի ստեղծման պատմությունը աշխարհում և Հայաստանում, հայաստանյան թիմների կողմից մրցույթին նաև ակցության կարգը։ Բոլոր բուհերի ուսանողներին բաժանվեցին մրցույթի վերաբերյալ տպագրված՝ «Զեսափի մրցույթը Հայաստանում և աշխարհում» խորագրով գրքույկը և Զեսափի ակումբի լրատումները։ Հանդիպումները հնարավորություն ընծեռեցին նաև վեր հանելու այն խնդիրները, որոնք խոչընդոտում են իրավաբան-ուսանողներին նաև ակցելու մրցույթին։ Բացահայտված խնդիրներն ունեին և սուբյեկտիվ, և օբյեկտիվ հիմքեր, սակայն հիմնական խնդիրները մրցույթի մարդամասների չիմացությունը և բուհերի մեջ նաև միջազգային իրավունքի նաև ազետների բացակայությունն է։ Այս այցելությունները կարողացան լուծել առաջին խնդիրը, սակայն երկրորդ խնդիրը՝ մարզային բուհերում միջազգային իրավունքի մասնագետների բացակայությունը, դեռևս մնում է անլուծելի։

2008թ.-ի մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպչական աշխատանքների մասը կազմեց նաև 2007 թվականի օգոստոսի 4-ին և 5-ին Ծաղկաձորում կայացած՝ նախապատրաստական սեմինարը:

Սենինարը հետապնդում էր երկու նպատակ՝ մի կողմից հայ այցելությունների ընթացքում ակտիվություն և մասնակցության պատրաստականություն ցուցաբերած հրավարան-ուսանողներին ավելի մանրանասն ներկայացնել մրցույթը, մրցույթի պաշտոնական կանոնները, մյուս կողմից՝ ծանոթացնել նրանց մրցույթի նախորդ տարիների մասնակիցների փորձին, համակել Ձեսափի մրցույթի ոգով, որն արդեն տարիներ շարունակ իր շուրջն է համախմբում բազմաթիվ հրավարան-ուսանողների աշխարհի գրեթե բոլոր երկրներից:

Սեմինարին մասնակցում էին ինչպես իրավաբան-ուսանողներ հայաստանյան 18 բուհերից, այնպես էլ մրցույթի նախորդ տարիների դատավորներ, մասնակից թիմերի անդամներ, որոնցից ունաք մասնակցել էին նաև մրցույթի միջազգային մրցափուլին, Դայաստանի Ձեսափի ակումբի անդամներ:

Սեմինարի ընթացքում Ձեսափի մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպիչ Արփինե Եղիկյանի կողմից մասնակցելի ներկայացվեց մրցույթը, դրա ստեղծման պատմությունը, կազմակերպման ու անցկացման ընթացակարգերը: «2007 Ֆ. Ձեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլում հաղթող ճանաչված Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանը ներկայացնող թիմի անդամները Ձեսափի մրցույթում առաջին քայլերն անող ուսանողներին ներկայացրեցին, թե ինչ դեր է խաղացել մրցույթն իրենց՝ որպես իրավաբանների կայացման ճանապարհին, փոխանցվեց մրցույթի ընթացքում ձեռք բերված փորձը, հնտություններն ու ոգին, գրավոր աշխատանքների կազմման ու բանավոր ելույթների ընթացքում կիրառվող մեթոդները, թիմային աշխատանքի կազմակերպման սկզբունքները:

Քանի որ մրցույթի ընթացակարգը կառուցված է ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի մոդելի հիման վրա, սեմինարի մասնակից ուսանողներին ներկայացվեց նաև ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի կառուցվածքը, գործառությները, դատավարության ընթացակարգը:

Սկսնակ ջեսափականներին իրենց խորհուրդներն ուղղեցին նաև մրցույթի նախորդ տարիների դատավորներ Վլադիմիր Վարդանյանը և Լիանա Ջարությունյանը: Մրցույթի դատավորներն իրենց ելույթներում մասնավորապես անդրադարձան մրցույթի պաշտոնական կանոններով սահմանված, գրավոր և բանավոր մրցափոլերին ներկայացվող պահանջներին՝ նշելով, թե դատավորի տեսանկյունից դրանցից որոնք են արժանի առավել ուշադրության և ինչպես պետք է բավարարել այդ չափանիշներին: Դատավորները հորդորեցին ուսանողներին հատկապես ուշադրություն դարձնել իրենց բանավոր ելույթներին: Բանավոր ելույթների ընթացքում մեծ նշանակություն պիտի տալ հոեստորական արվեստին, մասնավորապես՝ հոեստորի ձայնի տեմբրին, որը չպիտի լինի միատուն՝ լսարանին, առաջին հերթին ելույթը գնահատող դատավորին չհոգնեցնելու համար, բոլոր դատավորների հետ տեսողական կապ պահպանելուն, ինչը ստիպում է դատավորին ելույթի ողջ ընթացքում չշեղել ուշադրությունը բանախոսի ելույթից: Չպետք է կար-

դալ ելույթը, ինչը կարող է թողնել նյութին ոչ բավարար տիրապետելու տպավորություն: Դուտորի խնդիրը լսարանին գրավելն է, և կարևոր ատրիբուտ է նաև արտաքին տեսքը: Իհարկե առաջնային է ներկայացվող նյութի բովանդակությունը և հիմնավորվածությունը, սակայն կարևոր է նաև արտաքին կոկիկ տեսքը, ինչի արդյունքում բանախոսը կրողնի լուրջ տպավորություն և հետաքրքրություն կառաջացնի լսարանի մոտ՝ ունկնդրելու իր խոսքը:

Բանախոսի կարևոր խնդիրներից է նաև հատկացված ժամանակի ճիշտ կառավարումը: Ելույթը պետք է կառուցվի այնպես, որ պեսզի չսպառի հատկացված ողջ ժամանակահատվածը՝ հաշվի առնելով ելույթի ընթացքում դատավորների կողմից հնարավոր հարցադրումները: Բանախոսը պետք է նաև ներկայացնի իր կողմից համար առավել ուժեղ փաստարկները, այնուհետև միջին և բույլ փաստարկները՝ երկար չկենտրոնանալով վերջիններիս վրա:

Սեմինարին իրավիրված էր նաև Դայաստանում ԱՍՍ դեսպանատան հասարակայնության կապերի բաժնի ղեկավար Թօնակ Միթրնախտը: Պարոն Միթրնախտը հանդես եկավ ելույթով, որում ողջունելով մրցույթի կազմակերպումը Դայաստանում՝ կարևորեց առաջին հերթին զուտ մասնակցությունը, հատկապես մարզային բուհերի իրավաբան-ուսանողների, քանի որ մրցույթին մասնակցությունը լավ հնարավորություն է ծևափորվելու որպես հմուտ իրավաբաններ և աջակցելու երկրում ժողովրդավարության կայացմանը: Դայաստանում ԱՍՍ դեսպանատան ներկայացուցիչը նշեց, որ դեսպանատունն աջակցում է մրցույթի կազմակերպմանը, քանի որ այն կօգնի մասնակցներին պատրաստվելու որպես որակյալ իրավաբաններ և ձեռք բերել փորձ միջազգային իրավունքի բնագավառում:

Միջոցառումը, բացի փորձի փոխանակումից, ջեսափականներին հնարավորություն տվեց նաև շփվելու անկաշկանդ միջավարում, քննարկելու իրավական մի շարք խնդիրներ, փոխանակելու հետաքրքիր ու օգտակար գաղափարներ և պարզապես անցկացնելու հաճելի ժամանակ:

«2008 Ֆ. Ձեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հիմնահարցը կոչվում էր Աղովայի և Ռոթանիայի քրեադատավարական ընթացակարգերի որոշակի տարրերությունների առնչությամբ տարածայնությունների մասին:

Այն վերաբերում էր մարդու իրավունքների երաշխավորման և ահաբեկչական գործողություններին արձագանքելու միջև առկա հակասությանը:

Դամաձայնագրում քննարկման առարկա էին այն հարցերը, թե

արդյո՞ք ազատագրական պայքարի ընթացքում իրականացված ահաբեկչական գործողությունները, այդ գործողություններին մասնակցած անձանց ձերբակալումը, նրանց նկատմանը մեղադրանք ներկայացնելը և դատավարություն իրականացնելը հանդիսանում են միջազգային իրավունքի խախտում: Թիմերի խնդիրն էր ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի առջև միջազգային իրավունքի տեսանկյունից հիմնավորել վերոնշյալ խնդրահարույց հարցերը:

Մրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել 9 թիմեր՝ երևանյան և ՀՀ մարզերի բուհերից: Սահմանված ժամանակացույցին համապատասխան գրավոր աշխատանքներ ներկայացվեցին յոթ թիմերի կողմից, որոնք էլ մասնակցեցին մրցույթի բանավոր նորափուլի հետ:

Թիմերի կողմից ներկայացված աշխատանքները ստուգվեցին մրցույթի դատավորների կողմից, որոնց կազմում ընդգրկվել էին միջազգային իրավունքի ոլորտում Հայաստանի լավագույն մասնագետներ՝ տարբեր պետական ու ոչ պետական մարմինների աշխատակիցներ, փաստաբաններ, թիմերի անդամների համար անցկացվեցին գրավոր և բանավոր փաստաբանական հմտություններին վերաբերող սեմինարները։ Սեմինարների ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին մրցույթի Հայցադիմումների կազմնանը Պաշտոնական կանոններով և դրանց ազգային հավելվածով ներկայացվող պահանջները, առաջարկվեցին այն մերոդները, լեզվական ոճերը, որոնց կիրառումը կարող էր նպաստել առավել որակյալ և մրցունակ հայցադիմումների կազմնանը և մրցույթի բանավոր մրցափուլում հնարավորինս լավ հանդես գալուն։ Բանավոր փաստաբանական հմտություններին նվիրված սեմինարից հետո անցկացվեց վիճակահանություն, ինչի արդյունքնում պարզ դարձան նախընտրական մրցափուլերում միմյանց հետ մրցող թիմերի գույգերը։

2008թ. Ձեսափի մրցույթի հայաստանյան մրցափուլի բանավոր փուլը կայացավ 2008 թվականի փետրվարի 9-ին և 10-ին, որին մասնակցում էին մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած ինը թիմերից յոթը: Մասնակից թիմերը ներկայացնում էին Եվրասիա միջազգային համալսարանը, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամը, Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը, Հայկական բաց համալսարանը, «Մյուուդ» իրավաբանական ինստիտուտը, Ուսու-հայկական (սլավոնական) պետական համալսարանը և Երևանի պետական համալսարանը:

Մրցույթի դատավորների կազմում ընդգրկված էին լավագույն իրավաբաններ պետական ու ռազմական մարմիններից, փաստաբաններ:

Եզրափակիչ մրցափուլի դատավորներն էին ՀՀ Վարչական դատարանի նախագահ Տիգրան Մուկուչյանը, իրավաբան Սարգսի Կոյազյանը և փաստաբան Արա Զոհրաբյանը:

Σηργουερή ζητεί να καθιερωθεί κάποιαν και τερκού λέξη που θα αντικαθιστά την παλαιά λέξη για την απόδοση στην εργασία. Η παλαιά λέξη δεν μας αντικαθιστά την παλαιά λέξη για την απόδοση στην εργασία.

2008թ.-ի փետրվարի 10-ին Գոռվլդեն Թուլիփ Երևան հյուրանոցում տեղի ունեցավ Երեկույթ Զեսափականների մասնակցությանը, որի ընթացքում էլ կայացավ «Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայատանյան մրցափուկի հանդիսավոր մրզանակաբարձությունը:

Սիցոցառնան ընթացքում նրգույքի մասնակիցներին և նրգանակաբաշխության այլ մասնակիցներին իրենց ողջույնի և երախտագիտության խոսքն ուղղեցին նրգույքի ազգային կառավարիչ Արքիմես Եղիկյանը, նրգույքի համակազմակերպիչ «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության նախագահ Կարեն Զադոյանը և Յայաստանուն ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի դեկավար Թոնաս Միթրանախտոր, ինչին հաջորդեց հանդիսավոր մրցանակաբաշխությունը:

«2008 ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի կիսաեզրափակիչ փուլ էին անցել Եվրասիա միջազգային համալսարանը, Դայատանում Ֆրանսիական համալսարան իիմնադրամը, Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանը և Երևանի պետական համալսարանը:

Մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցեցին Երևանի պետական համալսարանը և Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանը ներկայացնող թիմը:

«2008 ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի հաղթող ճանաչվեց Երևանի պետական համալսարանը ներկայացնող թիմը:

Մրցույթում երկրորդ տեղը գրավեց Ռուս-հայկական (պլավոնական) պետական հաճախարանը Երևանու թիմը:

Մրցույթի լավագույն հայցադիմում Ծանաչվեց Երևանի պետական համալսարանը Ներկայացնող թիմի գրավիր աշխատանքը:

Գրավոր աշխատանքների գնահատականներով երկրորդ տե-

դը գրավեց Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը ներկայացնող թիմի գրավոր աշխատանքը:

Մրցույթի առաջին և չորրորդ նախընտրական մրցափուլերի լավագույն բանախոս ճանաչվեց Երևանի պետական համալսարանը ներկայացնող թիմի ավագ Լևոն Գևորգյանը:

Մրցույթի երկորրդ նախընտրական մրցափուլի լավագույն բանախոս ճանաչվեց Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանը ներկայացնող թիմի ավագ Արամ Վարդենյանը:

Մրցույթի երրորդ նախընտրական մրցափուլի լավագույն բանախոս ճանաչվեց Երևանի պետական համալսարանը ներկայացնող թիմի անդամ Տարոն Սիմոնյանը:

Մրցույթի լավագույն բանախոս տիտղոսին արժանացավ Երևանի պետական համալսարանը ներկայացնող թիմի ավագ Լևոն Գևորգյանը:

Զեսափի մրցույթի հայաստանյան մրցափուլի հաղթող թիմերին և լավագույն բանախոսներին, ինչպես նաև մրցույթի բոլոր մասնակիցներին շնորհվեցին վկայականներ:

Մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպիչների կողմից սահմանվել էին անվանակարգեր, ինչի առթիվ թիմերին շնորհվեցին համապատասխան հավաստագրեր. Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամը ներկայացնող թիմը արժանացավ Զեսափի հայաստանյան մրցափուլի «Տարվա հայտնություն» անվանակարգին, Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանը ներկայացնող թիմը՝ «Զեսափի ոգի» անվանակարգին, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամը ներկայացնող թիմը՝ «Ամենատոկուն թիմ» անվանակարգին:

«2008 թ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի հաղթող ճանաչված՝ Երևանի պետական համալսարանի թիմը սույն թվականի ապրիլի 6-ից 12-ը Վաշինգտոնում մասնակցել է Զեսափի մրցույթի միջազգային մրցափուլին:

«2008 թ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի միջազգային մրցափուլին մասնակցել են 110 թիմեր 77 երկրներից, որոնցից 97-ը մրցող, 11-ը՝ ցուցադրական, իսկ 2-ը՝ դիտող թիմեր:

2008-ի Զեսափի գավաթի Ծերմանի և Սթերլինգի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլին մասնակցել են քեյս Ուստերն Ռիզըրվ համալսարանի իրավունքի դպրոցը (ԱՄՆ) և Նոր Հարա-

վային Ուելսի համալսարանը (Ավստրալիա) ներկայացնող թիմերը, և հաղթող է ճանաչվել քեյս Ուստերն Ռիզըրվ համալսարանի իրավունքի դպրոցը:

Եզրափակիչ հանդիպման լավագույն բանախոս է ճանաչվել քեյս Ուստերն Ռիզըրվ համալսարանի իրավունքի դպրոցը ներկայացնող թիմի անդամ Մարգո Դեյը, իսկ նախնական մրցափուլերի լավագույն բանախոս՝ Ֆաթմա Ալ-Խուին՝ Լոնդոնի քոլեջ համալսարանի թիմից (Միացյալ Թագավորություն):

Նախնական մրցափուլերի լավագույն հայցադիմում է ճանաչվել Արեներ դե Մանիլայի համալսարանի (Ֆիլիպիններ) թիմի աշխատանքը:

«Զեսափի ոգի» մրցանակին արժանացել է Նամիբիայի համալսարանը ներկայացնող թիմը (Նամիբիա):

Միջազգային փուլում հայաստանյան թիմը հանդես է եկել չորս նախնական մրցափուլերում՝ Երկուական անգամ որպես հայցվոր և պատասխանող՝ մրցելով Մերսիկան, ԱՄՆ Վիրջինիայի համալսարանը, Բուլղարիան և Լիտվան ներկայացնող թիմերի դեմ՝ կրելով պարտություն գնահատականների չնչին տարբերությամբ:

Միջազգային մրցափուլին մասնակցող 110 թիմերի շարքում հայաստանյան թիմը գրավել է 90-րդ տեղը: Թիմի գրավոր աշխատանքը զբաղեցրել է 87-րդ տեղը:

Այնուամենայնիվ թիմի ելույթներն արժանացել են ոչ միայն դատավորների և հայ համայնքի ներկայացուցիչների գովեստին, այլ նաև մրցակից, հատկապես Վիրջինիայի համալսարանը ներկայացնող թիմի գովեստին, ինչի մասին թիմի անդամները ոչ միայն բանավոր, այլև էլեկտրոնային նամակով հայտնել են մեր թիմի անդամներին:

Միջազգային մրցափուլում հայաստանյան թիմ՝ առավել լավ արդյունքներ ունենալուն և բարձր հորիզոնականներ գրավելուն խոչընդոտում են մի շարք հանգամանքեր, մասնավորապես՝ թիմի անդամները նշում են մրցույթի դատավորների սուբյեկտիվիզմը, մրցույթի անցկացման վայրից (հյուրանոցից) հեռու բնակվելը, լեզվական խնդիրը, հատկապես հարցուապատասխանի ընթացքում, հայսատանյան բուլերում միջազգային իրավունքը ոչ բավարար խորությամբ ուստումնասիրելը և դասավանդման նոր ու առավել արդյունավետ մեթոդներ ներմուծելու անհրաժեշտությունը.

• Հնայած այն հանգամանքին, որ մրցափուլերի գրաֆիկը շատ ավելի ազատ է, քան ազգային փուլում, սակայն մրցույթի անց-

Կացման վայրից հեռու բնակվելը հանգեցնում է ժամանակի կորստի, հետևաբար և խանգարում է լավ պատրաստվելուն : Լուրջ խնդիր է նաև դատավորների սուբյեկտիվ մոտեցումը, ինչի մասին է խոսում, օրինակ, թիմի գրավոր աշխատանքին տրված գնահատականների մեջ տարբերությունը (օրինակ 100 միավոր գնահատման համակարգում նույն աշխատանքին դատավորներից մեկի կողմից 91, մյուսի կողմից 65 միավոր գնահատելո):

ամենամեծ խնդիրը, որի առաջ են կանգնում հայաստանյան թիմերը միջազգային փուլում, լեզվի խնդիրն է: Հակառակորդ թիմերի մեջ շատ են անգլիալեզու, ինչպես նաև անգլերենին՝ ինչպես մայրենի լեզվի տիրապետող թիմերը:

Այս խնդիրը գոնե մասնակիորեն լուծելու համար խորհուրդ է տրվում կարդալ մեծ ծավալի անգլիակեզու իրավաբանական գրականություն և աշխատել բանավոր անգլերեն խոսքի վրա: Այս խնդրի լուծման գործում մեծ ամելիք ունեն նաև բուհերը, որտեղ մասնագիտական անգլերենը դասավանդվում է բավականին քիչ ժամաքանակներով:

Վերոնշյալ և այլ խնդիրները, որոնք կանգնած են հայաստանյան թիմերի առջև և խանգարում են գրավելու ավելի բարձր հորիզոնականներ, կլինեն Ձեսափի մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպիչների հոգածության առարկան, որոնց վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքները կզուգորդվեն մրցույթի կազմակերպչական աշխատանքների հետ:

Մրցույթի կազմակերպիչներ

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան հանդիսանում է Հայաստանում «Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հիմնադիրներից մեկը՝ կանգնած լինելով այս ավանդույթի ձևավորման ակունքներում։ Մրցույթի հիմնադրման պահից ի վեր՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան համատեղել է իր և իր գործընկերների ջանքերը՝ լավագույն և արդյունավետ կերպով մրցույթը կազմակերպելու համար։ 2008թ.-ին «Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուկի կազմակերպիչներն էին ՀԵԽԱ-ն, Հայաստանի իրավաբանական հիմնադրամը և «ԼԻԳԼ ԸԼԱՅՑԸՆՍ» իրավաբանական ընկերությունը։ Մրցույթի կազմակերպմանը ֆինանսական աջակցուր-

յուն է ցուցաբերել Հայաստանում Ամերիկային դեսպանատունը, իսկ ՀՀ Դատական դեպարտամենտը տրամադրել է տարածք՝ մրցությ բանավոր փուլի անգլազման համար:

«Դայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՀՀ արդարադատության նախարարությունում՝ որպես հասարակական կազմակերպություն, գրանցվել է 1995թ.-ի մարտի 14-ին:

Հայաստանի երիտասարդ հրավարանների ասոցիացիայի ստեղծման հիմնական նպատակն էր համախմբել նոր սերնդի հրավարանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացնանք՝ որպես անկախ, ժողովրդավարական, իրավական պետություն։ Դիմնադրվելուց հետո Հայաստանի երիտասարդ հրավարանների ասոցիացիան ակտիվորեն ներգրավվեց Հայաստանի հասարակական կյանքում նպատակ ունենալով իրականացնել իր առջև դրված խնդիրները։ Հայաստանի երիտասարդ հրավարանների ասոցիացիայի առաջին գործունեությունը նվիրված էր Հայաստանի օրենքների պարզաբանումներին և քարոզչությանը, որից հետո կազմակերպությունը իրականացրեց ծրագրեր՝ ուղղված հասարակական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի ստեղծմանը, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին իրավական աջակցության ցուցաբերմանը։ Այնուհետև, Հայաստանի երիտասարդ հրավարանների ասոցիացիայի ծրագրերն ուղղվեցին սոցիալապես անապահով բնակչությանը անվճար իրավաբանական ծառայությունների մատուցմանը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը։ Ստեղծման պահից Հայաստանի երիտասարդ հրավարանների ասոցիացիան մեծ կարևորություն է տալիս երիտասարդ հրավարանների մասնագիտական կարողությունների զարգացման համար պայմանների ստեղծմանը։ Կազմակերպության առաքելությունն է ձևավորել կրթած, մասնագիտական բարձր կարողություններ ունեցող, նոր մտածելակերպի տեր իրավաբանների սերունդ, որի գործունեությունը մեծապես կնպաստի Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության առաջնային գործունեությունը։

յան և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ստեղծեց իրավաբանական ռեսուլտսների կենտրոն՝ բաղկացած ժամանակակից իրավաբանական գրադարանից, ժամանակակից տեխնիկական և տեղեկատվական միջոցներից: Ակսած 1999թ.-ից՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան սկսեց ակտիվորեն աշխատել մարզերում ստեղծելով իր տարածքային գրասենյակները Վանաձորում, Գյումրիում, Կապանում, Գորիսում և Խցևանում:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ունի բազմաթիվ տեղական և միջազգային կապեր, բազում գործընկերներ թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրություն: 1998թ.-ից կազմակերպությունն անդամակցում է երիտասարդ իրավաբանների եվրոպական ասոցիացիայի: 2004թ.-ից գործում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի <http://www.ayla.am> պաշտոնական վեբ կայքը:

Կազմակերպությունն ունի հինգ մասնագիտական հանձնաժողովներ և իրավաբան ուսանողների բաժանմունք: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի իրավաբան ուսանողների բաժանմունքը հիմնադրվել է 2004թ.-ին: Այն համախմբում է շուրջ 20 իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների: Այն նպատակ ունի խթանել իրավաբան ուսանողների ինքնակազմակերպումը, ինքնազարգացումը և մասնագիտական պրակտիկայի կազմակերպումը: Իրավաբան ուսանողների բաժանմունքը իր գործունեությամբ նպաստում է իրավաբան ուսանողների կողմից հետազոտությունների իրականացման, հոդվածների տպագրման, գիտաժողովների ու մրցույթների կազմակերպման գործընթացներին:

Իրավաբան ուսանողների բաժանմունքի կողմից 2004թ.-ից իրատարակվում է Իրավաբան ուսանողների բաժանմունքի եռամսյա պարբերականը՝ «Իրավաբան ուսանող» լրատուն: Գործում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի իրավաբան ուսանողների բաժանմունք՝ <http://lsd.ayla.am> պաշտոնական վեբ կայքը:

2000թ.-ից սկսած «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախանակ» մրցույթը հանդիսանում է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կարևոր ծրագրերից մեկը:

Հայաստանի իրավաբանական հիմնադրամ

Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հիմնադրվել է 2003 թվականի օգոստոսի 23-ին և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում գրանցվել 2003 թվականի սեպտեմբերի 9-ին: Հիմնադրամի հիմնական նպատակներից է նպաստել ՀՀ-ում իրավանացվող դատարանական բարեփոխումներին և ՀՀ-ում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը, ինչպես նաև նպաստել ՀՀ իրավաբանական բուհերի և բուհերի իրավաբանական ֆակուլտետների կայացմանը, օժանդակել իրավաբանական բուհերում և բուհերի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

2005թ.-ից գործում է Հայաստանի իրավաբանական հիմնադրամի <http://www.lawfoundation.am> պաշտոնական վեբ կայքը:

2004թ.-ից սկսած՝ Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հանդիսանում է «Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախանակ» մրցույթի հայաստանյան մրցափուլի համակազմակերպիչը:

Հայաստանի իրավաբանական հիմնադրամն աջակցել է «2008թ. Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախանակ» մրցույթի հայաստանյան մրցափուլի կազմակերպմանը ցուցաբերելով անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերություն

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը հիմնադրվել է 1997թ.-ին: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը իր ստեղծման պահից ի վեր բարձրակարգ իրավաբանական ծառայություններ է նաև ուղղություն իր վատահորդներին: Ներկայումս ընկերությունը հանդիսանում է Հայաստանում գործող տեղական և միջազգային առաջատար իրավաբանական ընկերություններից մեկը, որը ռազմավարական և ապագային միտված մոտեցում է ցուցաբերում վատահորդների գործերի և կարիքների նկատմամբ: Ընկերության գրասենյակների ցանցը նրա ծառայությունները մատչելի է դարձնում հանրապետության ամբողջ տարածքում:

«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» ընկերությունը ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ գործարար հաճախորդներին համապարփակ իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերություն է: Այն աշխատում է խոշոր, բազմազգ կորպորացիաների և ֆինանսական ինստիտուտների, ընտանեկան և մասնավոր բիզնեսը ներկայացնող հաճախորդների լայն շրջանակների հետ: «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերությունը հանդիսանում է տեղական և միջազգային առաջատար ընկերությունների և հաստատությունների հետ աշխատող առաջնեկ իրավաբանական ընկերություններից մեկը:

Ընկերության հիմքն են կազմում նոր սերնդի իրավաբանները, ուստի ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում նրանց կրթությանն ու փորձին: Այս հանգամանքի հաշվի առմամբ՝ ընկերությունը մասնակցում է մրցույթի կազմակերպմանը, քանզի Զեսափի մրցույթը գերազանց հնարավորություն է երիտասարդ իրավաբանների կողմից մասնագիտական փորձ ձեռք բերելու համար: Ընկերությունը հանդիսացել է նաև «2006թ.-ի և 2007թ.-ի Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի համակազմակերպիչը: Ընկերության վեր կայքի հասցեն է <http://www.la.am>:

«2008 Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի աջակիցները Դայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն

Դայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը հիմնվել է 1992թ.-ին: Դեսպանատունը իրականացնում է աջակցության ծրագրեր բաց քաղաքացիական հասարակության, շուկայական տնտեսության և տարածաշրջանում կայուն մքնուրութի հաստատման ուղղությամբ: Դեսպանատունը պատասխանատու է Միացյալ Նահանգների ու Դայաստանի կառավարությունների միջև կապերի պահպանման և քաղաքացիներին կոնսուլական ծառայությունների մատուցման համար: Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատունը հանդիսացել է «Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի 2003-2005թք.. հիմնական հովանավորը: 2006թ.-ին ևս Դեսպանատունը հոգացել է «Ֆիլիպ Զեսափի ան-

վան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի ազգային մրցափուլի կազմակերպչական ծախսերը և 2007թ.-ի հաղթող թիմի հայցադիմումների բարգմանությունների ծախսերը: Դայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան պաշտոնական վեր կայքի հասցեն է <http://www.usa.am>:

Դայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն աջակցել է Դայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային կազմակերպելու «2008թ.-ի Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլը՝ հոգալով մրցույթի ազգային մրցափուլի կազմակերպչական ծախսերը:

Դայաստանի Դամրապետության Դատական դեպարտամենտ

Դատական դեպարտամենտը ստեղծվել է 2006թ.ին: Դատական դեպարտամենտը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է դատարաններին, դատավորների ընդհանուր ժողովին, դատարանների նախագահների խորհրդին և արդարադատության խորհրդին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը:

Դատական դեպարտամենտը միջոցառումներ է ձեռնարկում՝ ուղղված դատական իշխանության արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծմանը, իրականացնում է այդ ոլորտի կադրային քաղաքականությունը:

Արդեն երկրորդ տարին է ՀՀ դատական դեպարտամենտն աջակցում է Դայաստանում Զեսափի մրցույթի անցկացմանը՝ տրամադրելով դահլիճներ դատարաններում՝ մրցույթի բանավոր մրցափուլերն անցկացնելու համար:

Երևանի պետական համալսարան

Երևանի պետական համալսարանը հիմնադրվել է 1919 թ.-ի մայիսի 16-ին Դայաստանի Դամրապետության նախարարների խորհրդի՝ Երևանում համալսարան հիմնելու վերաբերյալ որոշմանը: 1920 թ-ի հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) առեւտրային դպրոցի շենքում մեծ շուրջով կատարվում է Դայաստանի համալսարանի բացման հանդիսավոր արարողությունը:

Առաջին ուսումնական տարում համալսարանն ուներ մեկ՝

պատմալեզվաբանական ֆակուլտետ, 262 ուսանող և 32 դասախոս:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, ՀԽՍՀ առաջին լուսողուկոմ Աշոտ Շովիանիայանի «Երեւանի համալսարանի վերակազմության մասին» հրամանով, 1920 թ.-ի դեկտեմբերի 17-ին Հայաստանի համալսարանը վերանվանվեց Երեւանի ժողովրդական համալսարան:

ՀՀ Կառավարության 1923 թ.-ի հոկտեմբերի 20-ի որոշման համաձայն՝ ժողովրդական վերանվանվեց Երևանի պետական համալսարան:

Համալսարանում այսօր գործող 22 ֆակուլտետներում մասնագիտանում են մոտ 13 հազար սովորողներ: Բարձր որակավորում ունեցող գիտնականների շնորհիվ բուհում իրականացվում են ժամանակակից գիտության տարբեր ոլորտներին առնչվող հիմնարար և կիրառական կարևորագույն հետազոտություններ: Ուսումնագիտական աշխատանքները կազմակերպվում են ավելի քան 100 ամբիոններում, որոնք համալրված են նորագույն տեխնիկայով և սարքավորումներով:

Երևանի պետական համալսարանի՝ որպես պետական ինքնակար բարձրագույն ուսումնական հաստատության գործումներությունը նպատակ է հետապնդում հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների կազմակերպանը:

2008թ.-ին բուհը. «X Group» ՍՊԸ-ի հետ համատեղ (նախագահ՝ Խաչիկ Խաչատրյան) հովանավորել է հաղթող թիմի մասնակցությունը միջազգային մրցափուլում՝ տրամադրելով ճանապարհածախսի և վիզաների ստացման գումարները: Բուհի կողմից հաղթող թիմի մասնակցություննը միջազգային մրցափուլին ապահովելու նպատակով ֆինանսական օժանդակություն ցուցաբերելը Զեսափի հայաստանյան մրցափուլում դարձել է ավանդույթ, ինչը հնարավորություն կտա կարծ ժամանակի ընթացքում մրցույթը դարձնել առավել ինքնաֆինանսավորվող:

Զեսափի մրցույթի կայացմանն օժանդակում են ոչ միայն կազմակերպությունները, այլև անհատները: Այս տարի մրցույթի կայացմանն իր աջակցություն է ցուցաբերել Ամերիկայի հայ իրավաբանների միության անդամ, նախկին նախագահ, Զեսափի ակումբի պատվավոր բարեկամ պարոն Ռոբերտ ՌումյանըԱյս տերի

տեր և տիկին Ռոբերտ և Մարտ Ռումյանները մրցույթի ողջ ընթացքում սիրով հյուրընկալել են թիմի անդամներին իրենց բնակարանում:

Թիմի անդամների մեկնումից առաջ տեր և տիկին Ռոբերտ և Մարտ Ռումյանները կազմակերպել են ընթիք, որի ընթացքում Զեսափի հայաստանյան թիմի անդամները ներկայացվել են Ամերիկայի հայ համայնքին և կազմակերպվել է հանգանակություն, որի ընթացքում հավաքված գումարը փոխանցվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային, վերջինիս գործունեությանն աջակցելու նպատակով:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ մրցույթի հայաստանյան մրցափուլի ազգային կառավարիչն է Արփինե Եղիկյանը:

Հասցե՝ Հայաստան, ք.Երևան, 375010, Նալբանդյան 7, բն. 2

Հեռախոս՝ (374 10) 540199

Հեռապատճե՝ (374 10) 580299

Էլ. փոստ՝ info@jessup.am

Մրցույթի հայաստանյան մրցափուլի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կարելի ստանալ «Ֆ.Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի <http://www.jessup.am> պաշտոնական վեբ կայքից:

Իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի Ֆիլիպ Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ մրցույթի գործադիր տնօրենն է Էնիքի Բոյեն:

Էլ. փոստ՝ aboye@ilsa.org

Մրցույթի միջազգային և ազգային մրցափուլերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կարելի ստանալ իրավաբան ուսանողների միջազգային ասոցիացիայի <http://www.ilsa.org> պաշտոնական վեբ կայքից:

Հայաստանի Զեսափի ակումբի համակարգողն է Արփինե Ե-

Դիկյանը:

Հասցե՝ Հայաստան, ք.Երևան, 375010, Նալբանդյան 7, բն. 2

Հեռախոս՝ (374 10) 540199

Հեռապատճե՝ (374 10) 580299

Էլ. փոստ՝ club@jessup.am

Հայաստանի Զեսափի ակումբի գործունեության ու ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կարելի է գտնել ակումբի ինտերնետային էջում, որը տեղակայված է «Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի <http://www.club.jessup.am> պաշտոնական վեբ կայքում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մարդկության առջև ծառացող գլոբալ խնդիրները կարող են արդյունավետ լուծում ստանալ միայն բոլոր ազգերի ջանքերի միավորման դեպքում, ինչն էլ առաջացնում է նրանց միջև առաջացող ու զարգացող հարաբերությունների կարգավորման անհրաժեշտություն, ինչպիսի խնդիրն էլ դրված է միջազգային իրավունքի վրա: Եվ այդ խնդիրների լուծման գործում իր ներդրումը կարող է ունենալ, ինչպես նաև հնարավորինս մեծ օգուտներ քաղել այն պետությունը, որը կարողանում է ճիշտ կողմնորոշվել արտաքին հարաբերությունների բնագավառում: Իսկ վերջինիս համար անհրաժեշտ է ունենալ միջազգային իրավունքին բարձր մակարդակով տիրապետող և ճգնաժամային իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու ունակություն ունեցող մասնագետներ, ինչպիսի հետայսու կարող են դառնալ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, գիտակցելով գալիք սերնդի դերը ներ երկրի զարգացման գործում, հնարավոր բոլոր միջոցներով փորձել և փորձում է աջակցել վերջիններին՝ որպես երկրի գալիքի համար պատասխանատու անձանց: Հայ իրավաբան-ուսանողների կողմից միջազգային չափանիշներին ծանոթանալու, միջազգային իրավունքին առավել լավ տիրապետելու համար նրանք պետք է անմիջականորեն ուսումնասիրեն այն, ունենան պրակտիկ կիրառման փորձ, զգան իրենց այդ չափանիշների կրողն ու կիրառողը: Այս առումով հիանալի հնարավորություն է ՀԵԽԱ-ի կողմից իր համախոհների անգնահատելի աջակցությամբ կազմակերպվող «Ֆ. Զեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլին մասնակցությունը:

Այս բնագավառում անելիքները դեռևս շատ են, և Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան ու Զեսափականները շարունակում են ջանքեր չխնայել իրենց առջև դրված նպատակներին հասնելու և աշխարհին Զեսափի մրցույթին արժանի ու մրցունակ թիմեր ներկայացնելու համար:

- © ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՑԱՍԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍԹԵԽԱՑԻ
 - © ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
 - © «ԼԻԳԻ ԸՆԱՅԵՐԸ» ԻՐԱՎԱԲԱՆՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Յ, Երևան, Նալբանդյան 7, բն.2
հեռ.՝ 540199, ֆաք.՝ 580299
Էլ.փոստ՝ ayla@ayla.am; la@la.am;
lawfoundation@lawfoundation.am

Ստորագրված է տպագրության 25.05.2008: Չափսը՝ 60 x 84 ¼₃₂:
Թուղթը՝ օֆսեթ - 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»:
Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 2,75 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 750 օրինակ:

«ԳԱՐԵԳ - ՀՐԱՄԱ» ՍՊԸ



ԻՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:
Էլ. փոստ *lusakn@rambler.ru*

